




ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
ՖԻՆԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից
թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսերի



Թողարկող

Տեղաբաշխող

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

Թողարկողի ֆիրմային անվանումը՝	«ՖԻՆԲԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն
Կազմակերպա-իրավական ձևը՝	Փակ բաժնետիրական ընկերություն
Տեղեկություններ թողարկողի վերաբերյալ՝	0023, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 10) 54 55 31, էլ. փոստ՝ inform@finca.am ինտերնետային կայք՝ www.finca.am


Արժեթղթերի դասը՝	անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆԲԱ» ՈւՎԿ ՓԲԸ խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնային եկամտաբերություն՝	
Շրջանառության ժամկետը՝	
Տեղաբաշխման ձևը՝	
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	մինչև 4,900,000,000 (չորս միլիարդ ինը հարյուր միլիոն) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար), ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը կկազմի դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ը

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Կազմակերպա-իրավական ձևը՝	Բաց բաժնետիրական ընկերություն
Տեղեկություններ տեղաբաշխողի վերաբերյալ՝	0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Պուշկինի 19, հեռ. (+374 10) 59 23 23, էլ. փոստ՝ araratbank@araratbank.am ինտերնետային կայք՝ www.araratbank.am

“ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ”:

ՀՀ ԿԲ Նախագահի 30.12.2016թ

թիվ 1/9706¹ որոշում





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Էջ
	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	4
ԲԱԺԻՆ 1.	ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	6
1.	Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ	6
2.	Թողարկողին և Թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր	11
3.	Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	17
4.	Թողարկողի աուդիտ իրականացնող անձ	19
5.	Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	20
6.	Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները	21
7.	Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները	22
ԲԱԺԻՆ 2.	ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24
8.	Ռիսկային գործոններ	24
9.	Հիմնական տեղեկատվություն	25
10.	Տեղեկատվություն Թողարկողի անվանական պարտատոմսերի վերաբերյալ	25
11.	Առաջարկի ժամկետները և պայմանները	36
12.	Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	40
13.	Լրացուցիչ տեղեկատվություն	41
ԲԱԺԻՆ 3.	ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	42
14.	Անկախ աուդիտորները	42
15.	Ռիսկային գործոններ	42
16.	Տեղեկատվություն Թողարկողի մասին	53
17.	Բիզնեսի նկարագիրը	56
18.	Թողարկողի կառուցվածքը	61
19.	Թողարկողի հիմնական միջոցները	62
20.	Թողարկողի զարգացման վերջին միտումները	62
21.	Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը	63
22.	Թողարկողի կառավարման մարմինները	65
23.	Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը	71
24.	Թողարկողի գլխավոր հաշվապահը	76
25.	Հսկող անձինք	77
26.	Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների,	77



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
ՖԻՆԱՆՍԱՆԻ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից
թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսերի



Թողարկող

Տեղաբաշխող

	Ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	
27.	Լրացուցիչ տեղեկատվություն	77
28.	Էական պայմանագրերը	79
29.	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	79
30.	Այլ տեղեկատվություն	80
	2014-2015 թթ. ֆինանսական հաշվետվություններ և անկախ արտոնագրական եզրակացություններ	
	2016 թվականի երրորդ եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ	
	Հավելվածներ	

	ՕՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պաշտատոմսերի	ԱՄՈՒՆՍՔԱՆԿ 7
	Թողարկող	Տեղաբաշխող

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

"Մենք" ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ցանձերը, որպեսզի պարզենք ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթուրել ծրագրային ազդագրի ռոմանտանությունը":

ստորագրող անձինք՝

Ջեֆ Ֆլաուերս (անուն, ազգանուն)	«ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի նախագահ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>22.12.2016</u> (ամսաթիվ)
Դեյն Սթիվենս Մաք Գվայեր (անուն, ազգանուն)	«ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վաժա Մայսուրադզե (անուն, ազգանուն)	«ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ֆլորիան Դերվիշի (անուն, ազգանուն)	«ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>22.12.2016</u> (ամսաթիվ)
Արարատ Գյուլումյան (անուն, ազգանուն)	«ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>22.12.2016</u> (ամսաթիվ)
Հրայա Թոխմախյան (անուն, ազգանուն)	«ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ Գլխավոր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>22.12.2016</u> (ամսաթիվ)
Անուշ Պետրոսյան (անուն, ազգանուն)	«ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ Գլխավոր ֆինանսական տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>22.12.2016</u> (ամսաթիվ)



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
ՖԻՆԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից
թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսերի

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Թողարկող

Տեղաբաշխող

Արտակ Միքայելյան

«ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գլխավոր հաշվապահ

(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

22.12.2016
(ամսաթիվ)

Աշոտ Օսիպյան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Վարչության նախագահ,
Գործադիր տնօրեն

(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

20.12.2016
(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են՝

Հրայր
Թոխմախյան

«ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

(անուն, ազգանուն)



(պաշտոն)

(ստորագրություն)

22.12.2016
(ամսաթիվ)



Կ.Տ.

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Թողարկող կամ Կազմակերպություն) պարտատոմսերի ծրագրային ազդագրի (այսուհետ՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխող) գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ www.finca.am, www.araratbank.am:

2013, 2014, 2015 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրն է հանդիսանում տարեկան աուդիտորական եզրակացությունը, իսկ մնացած տվյալների ներկայացման աղբյուր են հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկին տրամադրվող հաշվետվությունները:

1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն:

ռուսերեն՝ «ФИНКА» Универсальная Кредитная Организация Закрытое Акционерное Общество.

անգլերեն՝ “FINCA” Universal Credit Organizaton Closed Joint-Stock Company.



Թողարկողի կրճապ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ռուսերեն՝ «ФИНКА» УКО ЗАО

անգլերեն՝ “FINCA” UCO CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

	<p>ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի</p>	
Թողարկող		Տեղաբաշխող

ՀՀ, ք. Երևան, Ազաթանգեղոսի փ. 2ա, գրանցման համարը՝ 13:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ազաթանգեղոսի փ. 2ա:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 54 55 31, (+374 10) 54 55 32,

ֆաքս՝ (+374 10) 58 48 63,

էլ. փոստ՝ inform@finca.am,

ինտերնետային կայք՝ www.finca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:



Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապվել Կազմակերպության մասնագետների հետ, հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 54 55 31:

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2006 թվականի մարտի 28-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական:

Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆԸԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության առաքելությունն է հիմնավոր լուծումների միջոցով հաղթահարել աղքատությունը՝ օգնելով մարդկանց ստեղծել ակտիվներ, նոր աշխատատեղեր և բարելավել իրենց ապրելակերպը:

Կազմակերպության տեսլականն է լինել ոչ ավանդական համայնքային բանկ, որը շահեկանորեն ու ամենայն պատասխանատվությամբ նորարական և արդյունավետ ֆինանսական ծառայություններ է մատուցում բազմաթիվ կարիքավոր հաճախորդների:

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

Կազմակերպության նպատակն է հասանելի դարձնել կայուն, սոցիալապես պատասխանատու ֆինանսական ծառայությունները կարիքավոր անհատներին ու համայնքներին, որոնք հնարավորություն են ընձեռում նշված խմբերին ներդրում կատարել ապագայի մեջ:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 490,596 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Կազմակերպության միակ բաժնետեր է հանդիսանում «ՖԻՆ.ՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» կազմակերպությունը (տվյալները ներկայացված են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից՝ 06.09.2016 թվականի դրությամբ):



Քիզնեսի համառոտ նկարագիրը

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը:

Գործունեությունը սկսելուց ի վեր Կազմակերպությունն իր բնույթով հանդիսանում է ունիվերսալ վարկային կազմակերպություն, մասնավորապես, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց, որպես գործակալ կնքում է ԱՊՊԱ և ապահովագրական այլ պայմանագրեր: Իր կողմից մատուցվող ծառայություններն ամբողջականացնելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2013 թվականից մատուցում է նաև արտարժույթի փոխանակման ծառայություններ:

Վարկավորման գործընթացը Կազմակերպությունն իրականացնում է ինչպես սեփական կապիտալի, այնպես էլ ներգրավված միջոցների հաշվին: Կազմակերպությունը միջնաժամկետ և երկարաժամկետ դրամական միջոցներ ներգրավելու նպատակով համագործակցում է այնպիսի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկը (EBRD), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Սևծովյան առևտրի և զարգացման բանկը (Black Sea Trade and Development Bank) և Հոլանդական զարգացման բանկը (FMO) և Ասիական Չարգացման Բանկը (Asian Development Bank):

Հիմնադրման օրվանից Կազմակերպությունը համագործակցում է նաև մի շարք հեղինակավոր միկրոֆինանսավորման զարգացման հիմնադրամների հետ, ինչպես օրինակ responsAbility, Symbiotics, Blue Orchard, Triple Jump, OikoCredit, DWM, Incofin, Triodos:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող


Կազմակերպությունն ունի 37 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում: 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելը կազմել է շուրջ 28.2 մլրդ ՀՀ դրամ, ինչն իրենից ներկայացնում է 7.6% աճ 2014 թվականի նկատմամբ:



Ստորև ներկայացվում է Կազմակերպության ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

	հազ. ՀՀ դրամ			
	30.09.2016	31.12.2015	31.12.2014	31.12.2013
Ակտիվներ, այդ թվում՝	29,868,048	31,293,894	29,933,427	25,357,067
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	27,882,183	29,193,661	26,398,818	23,966,691
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	24,684,170	28,240,546	26,237,732	22,871,716
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	1,964,127	0	55,021	1,094,975
Ներդրումներ ֆինանսական ակտիվներում	1,233,886	953,115	106,065	0
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	93.35%	93.29%	88.19%	94.52%

Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.

"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ կազմակերպական կառուցվածք



 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

2. Թողարկողի և Թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկեր



Ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես թողարկող կազմակերպության գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի և պարտատոմսերի հետ կապված ռիսկերի հետ:

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Կազմակերպությունը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում՝ վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժույթային, գործընկերոջ (counterparty risk), գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը: Կազմակերպությունը ռիսկերի կառավարման հարցում առաջնորդվում է ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլի կողմից մշակված «Դուստր Կազմակերպության Ընդհանուր Քաղաքականության Ձեռնարկ»-ով և ներքին մշակված կանոնակարգերով:

Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով Կազմակերպությունը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը: Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները գնահատելու համար կարող եք օգտվել Թողարկողի ինտերնետային www.finca.am կայքում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններից:

Վարկային ռիսկը Կազմակերպության վարկառուների, փոխառուների և վերջինիս նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից պայմանագրային պարտավորությունները

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

Ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու հավանականությունն է ինչը կարող է վնաս հասցնել Կազմակերպության կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը Թողարկողի կարևորագույն խնդիրներից է:



Կազմակերպության վարկային պորտֆելը դիվերսիֆիկացված է և իր մեջ չի պարունակում խոշոր կենտրոնացումներ. այն է՝ վարկի առավելագույն գումարը կազմում է 100,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ, իսկ վարկային պորտֆելի վարկի միջին գումարը կազմում է 1,857 ԱՄՆ դոլար: Վարկավորման գերակա ուղղություններն են հանդիսանում մանրածախ վարկավորումը և ՓՄՁ վարկերի տրամադրումը:

Իրացվելիության ռիսկ, երբ Կազմակերպության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Կազմակերպության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Իրացվելիության ռիսկի կառավարման տեսանկյունից Կազմակերպությունը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացված և կայուն կառուցվածքը, որակյալ և արագ իրացվելի ակտիվների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

Տոկոսադրույքի ռիսկը, երբ շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, տոկոսային եկամուտների և ի վերջո նաև կապիտալի վրա:

Կազմակերպությունը տոկոսադրույքի ռիսկի կառավարումն իրականացնում է վերլուծական տարբեր հաշվետվությունների միջոցով, որոնք ամսական կտրվածքով ներկայացվում են ԱՊԿԿ-ին և «ՖԻՆԸԱ Ինթերնեյշնլ»-ին: Կազմակերպության դրամական հոսքերի տոկոսների վերլուծությունն ուղղված է բացահայտելու այն ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում առկա տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, որի հետևանքով էլ ֆինանսական ակտիվի ապագա դրամական հոսքերը կարող են տատանվել, մասնավորապես, տոկոսադրույքներում տեղի ունեցող

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՎՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

փոփոխությունների արդյունքում կարող են փոփոխվել դրամական միջոցների հոսքերի իրական արժեքը:

Արտարժույթային ռիսկը սահմանվում է որպես փոխարժեքի փոփոխության հետևանքով Կազմակերպության ֆինանսական արդյունքների և կապիտալի վրա ունեցած բացասական ազդեցության ռիսկ: Քանի որ Կազմակերպության ակտիվները և պարտավորություններն արտահայտված են մեկից ավելի արժույթներով, Կազմակերպության վրա փոխարժեքի փոփոխությունն ունենում է հետևյալ ազդեցությունները՝

- արտարժույթային ռիսկ, որը չափվում է բաց արտարժույթային դիրքով և արտարժույթային ժամկետային ճեղքվածքով (FX Maturity GAP),



- Կապիտալի համարժեքության գործակցի նվազում՝ ՀՀ դրամի արժեզրկման դեպքում, քանի որ Կազմակերպության կապիտալն արտահայտված է ՀՀ դրամով, իսկ ակտիվները հաճախ արտահայտված են այլ արժույթներով,

- Խմբի համախմբված կապիտալի զգալի մասը տարբեր ազգային արժույթների նկատմամբ կարող է կրել արտարժույթային ռիսկ, քանի որ Կազմակերպության համար փակ արտարժույթային դիրքը խմբի տեսանկյունից կարող է հանդիսանալ բաց դիրք:

Կազմակերպությունն իրականացնում է ակտիվների ու պարտավորությունների արժույթային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված ու ցածր ռիսկային քաղաքականություն: Այնուամենայնիվ, ՀՀ դրամի փոխարժեքի էական արժեզրկումը հիմնական արժույթների նկատմամբ բացասական ազդեցություն կարող է ունենալ Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա՝ վատթարացնելով արտարժույթային վարկերի սպասարկման որակը, ավելացնելով պահուստավորումը՝ արդյունքում բերելով Թողարկողի շահութաբերության նվազմանը:

Գործընկերոջ ռիսկի սահմանաչափին իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ: Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ միջբանկային գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների.

- ☞ Մայր գումարի կորստի ռիսկը դրամական այն միջոցների կորստի ռիսկն է, որոնք Կազմակերպությունը գործընկերոջը տրամադրել է որպես ավանդ կամ ստացվելիք փոխանցման դիմաց կանխավճար/փոխանցում և որոնք գործընկերը չի վերադարձրել կամ հետ չի վճարել ժամանակին՝ պայմանագրով սահմանված ամբողջ գումարի չափով (գործընկերոջ դեֆոլտ): Մայր գումարի կորստի ռիսկը հավասար է վճարման/փոխանցման ենթակա դրամական միջոցներին՝

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

գործարքի գումարին, եթե գործարքը նախատեսվում է կատարել մեկ փոխանցումով, կամ համապատասխան մնացորդային գումարին, եթե գործարքը նախատեսվում է կատարել մի քանի փոխանցումներով:



☞ Փոխարինման ռիսկը վնասի այն չափն է, որը հավասար է տվյալ գործարքը շուկայում համարժեք գործարքով փոխարինման հետևանքով կրած ծախսերին: Գործարքի փոխարինումը կարող է անհրաժեշտ լինել գործընկերոջ վարկարժանության վատթարացման կամ գործարքով վճարման նախորդող օրվանը գործընկերոջ ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում: Փոխարինման ռիսկն առկա է այն դեպքերում, երբ Կազմակերպությունն ունի գործընկերոջից որոշակի ժամանակ հետո ստացվելիք դրամական հոսքեր:

☞ Առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ: Հաճախ իմաստ ունի տարանջատել այս երկու կատեգորիաները, քանի որ որոշ գործառնությունների գծով գործընկերոջ ռիսկը տարբեր է գործարքի կյանքի ընթացքում: Այն գործարքների դեպքում, երբ կողմերից երկուսն էլ փոխանակում են դրամական հոսքեր, ռիսկն ավելի բարձր է գործարքով նախատեսվող վճարումների իրականացման օրը (երբ Կազմակերպությունն իրականացնում է վճարումն առանց ստանալու հաստատումը, որ գործընկերոջ հանդիպակաց վճարումը հաշվեգրված է), քան վճարումների օրվան նախորդող ժամանակաշրջանում, երբ Կազմակերպությունը հնարավորություն ունի զերծ մնալ իր վճարումների կատարումից, եթե ակնհայտ է, որ գործընկերը չի կատարելու իր վճարումը:

☞ *Թողարկողի ռիսկ:* Գործընկերոջ ռիսկի համատարած օգտագործվող ենթակատեգորիա է հանդիսանում թողարկողի ռիսկը, որը սահմանվում է որպես արժեթուղթ թողարկողի դեֆոլտի կամ սնանկության հետևանքով հնարավոր կորստի հավանականություն:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Կազմակերպության կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Վարկային կազմակերպության գործունեության լիցենզավորման և կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է,

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Թողարկողը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:



Կազմակերպության գործունեության ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա: Կազմակերպությունը բավականին կայուն դիրք է զբաղեցնում շուկայում և միկրոֆինանսավորման ոլորտում հանդիսանում է առաջատար:

Գործառնական ռիսկը, որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել Թողարկողի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև Թողարկողի համբավը:

Կազմակերպությունում գործառնական ռիսկը կառավարվում է այդ գործառնույթի համար նախատեսված ստորաբաժանման՝ «Ներքին վերահսկողության» բաժնի կողմից: Գործառնական ռիսկերի կառավարման համար մշակված են և պարբերաբար վերանայվում են բազում հսկողական մեխանիզմներ, ինչպիսիք են՝ ռիսկային դեպքերի վերաբերյալ ազդակներ հաղորդող հատուկ մշակված 17 հաշվետվությունները գործընթացների մշակման, գրանցման և հաստատման գործառնույթների բաժանումը տարբեր աշխատակիցների միջև, ամենամսյա այցելությունները մասնաճյուղեր և տվյալ տարածաշրջանի հաճախորդներին:

Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԼՔԱ ՌԻՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանն՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:



Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Կազմակերպությունը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով, այն է՝ շուկա ստեղծողի (market maker) միջոցով ապահովել պարտատոմսերի իրացվելիությունը: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

Արտարժույթային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:



3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է որդեգրած ռազմավարությանը համաձայն: Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Կազմակերպության կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին:

2015 թվականի ընթացքում Կազմակերպության ակտիվներն աճել են 4.5%-ով և կազմել 31,293,894 հազ. ՀՀ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի և վաճառքի համար մատչելի ներդրումների աճով: Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2015 թվականի ընթացքում աճել է 0,4%-ով և կազմել՝ 5,899,185 հազ. ՀՀ դրամ: Պարտավորություններն աճել են 5,5%-ով և կազմել՝ 25,394,709 հազ. ՀՀ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է փոխառու միջոցների և հետգնման պայմանագրերով ներգրավված միջոցների աճով: 2014 թվականի համեմատ, 2015 թվականին Կազմակերպության վարկային պորտֆելն աճել է 2,002,814 հազ. ՀՀ դրամով կամ 7,6%-ով:

2016 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության ակտիվները կազմել են 29,868,048 հազ. ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 23,858,405 հազ. ՀՀ դրամ, կապիտալը՝ 6,009,643 հազ. ՀՀ դրամ: 2016 թվականի առաջին ինն ամիսների կուտակված զուտ շահույթը կազմել է 374,834 հազ. ՀՀ դրամ¹:

¹ Տվյալ պարբերությունում ներկայացված թվերի համար հիմք են հանդիսացել հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և աուդիտի կողմից ստուգված չեն:

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

2015 թվականի ընթացքում Կազմակերպությունը ստացել է 45,063 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ: Նախորդ տարվա համեմատ շահույթի ցուցանիշի շուրջ 92% նվազումը (շուրջ 13 անգամ) հիմնականում պայմանավորված է տոկոսային ծախսերի առաջանցիկ աճով տոկոսային եկամուտների նկատմամբ և տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստների գծով ծախսերի աճով: Շահույթի ցուցանիշի անկումը պայմանավորված է նաև ֆինանսական շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում Կազմակերպության կողմից վարվող ճկուն գնային քաղաքականությամբ, արդյունքում, նվազեցնելով տոկոսային սպրեդը, Կազմակերպությունը ոչ միայն նպատակ է հետապնդում ամրապնդել շուկայի մասնաբաժինը, այլ նաև գործող, ինչպես նաև նոր ներդրվող պրոդուկտների մրցունակության բարձրացմամբ նվաճել նաև շուկայի նոր մասնաբաժին:



Կազմակերպության փաստացի համալրված կանոնադրական կապիտալը 2015 թվականի վերջի դրությամբ կազմել է 4,905,960,000 ՀՀ դրամ, որը բաղկացած է 490,596 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2016 թվականի ընթացքում՝ մինչև Ազդագրի գրանցման ներկայացման օրը, Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

2016 թվականի հունվարից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում Կազմակերպության զուտ շահույթը կազմել է 374,834 հազար ՀՀ դրամ՝ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի համեմատությամբ աճելով 329,771 հազար ՀՀ դրամով: Կազմակերպության ընդհանուր կապիտալը կազմել է 6,009,643 հազար ՀՀ դրամ:

Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Կազմակերպության դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են նյութական, բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ Կազմակերպության զարգացման հեռանկարների վրա:

Կազմակերպությունը համապատասխանում է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունների պայմանագրերով ստանձնած բոլոր ֆինանսական նորմատիվներին, բացառությամբ Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC) և Վերակառուցման Զարգացման Եվրոպական Բանկի հետ փոխառության պայմանագրերով սահմանված մեկ նորմատիվի: Կազմակերպության գործադիր մարմինը սերտորեն աշխատում է

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

վերը նշված ֆինանսական կազմակերպությունների տվյալ խախտումը վերացնելու ուղղությամբ Կազմակերպության որևէ ակտիվ չի հանդիսանում գրավի առարկա, և Կազմակերպությունը չի հանդիսանում որևէ պայմանագրի կողմ՝ պայմանական կամ ոչ պայմանական, համաձայն որի իր ակտիվները կարող են գրավ հանդիսանալ:

Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ Կազմակերպության ղեկավարությունը մշտապես իր ուշադրության ներքո է պահում նաև Կազմակերպության կազմակերպական կառուցվածքը արդիական և ժամանակակից բիզնեսի վարման կանոններին համապատասխանեցնելու խնդիրը, որի հետևանքով հնարավոր են Թողարկողի կազմակերպական կառուցվածքի փոփոխություններ, որոնք միտված կլինեն Կազմակերպության գործունեության բարելավմանը և արդյունավետության ու շահութաբերության բարձրացմանը:

4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ

Կազմակերպության 2011 թվականի անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից, իսկ 2012, 2013, 2014 և 2015 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությունը:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն գրանցվել է Հայաստանում 2012 թվականի հոկտեմբերին: Վերջինիս վերջնական բաժնետերը և վերահսկողը Դելոյթ ԱՊՀ ՓԲԸ-ն է:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ հասցեն է՝

ՀՀ ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 10, տարածք 1/4, հեռ.՝ (+374 10) 52-88-99, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.bdoarmenia.am:



Կազմակերպության տնօրենն է Արթուր Անդրեասյանը:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ ք. Երևան 0010, Ամիրյան 4/6, հեռ.՝ (+374 10) 52-65-20, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.deloitte.ru:

Կազմակերպության Գործադիր տնօրեն-բաժնետեր է հանդիսանում Սրբուհի Հակոբյանը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում: Վերջին 4 տարիների ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱՆԻ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Թողարկողի կանոնադրությունով սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

- ✚ Բաժնետերերի ժողով,
- ✚ Տնօրենների խորհուրդ,
- ✚ Վարչություն,
- ✚ Գլխավոր տնօրեն:



Կազմակերպության Բաժնետերերի ժողովը կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Կազմակերպության Տնօրենների խորհուրդն ընտրվում է Բաժնետերերի որոշմամբ՝ Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Վարչությունը և Գլխավոր տնօրենը կառավարում են Վարկային կազմակերպության առօրյա ընթացիկ գործունեությունը:

Կազմակերպության Խորհուրդը բաղկացած է հինգ անդամներից.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Զեֆ Ֆլաուերս	Խորհրդի նախագահ	26 տարի
2	Դեյն Սթիվեն ՄաքԳվայեր	Խորհրդի անդամ	40 տարի
3	Վաժա Մայսուրադզե	Խորհրդի անդամ	17 տարի
4	Ֆլորիան Դերվիշի	Խորհրդի անդամ	19 տարի
5	Արարատ Գյուլումյան	Խորհրդի անդամ	18 տարի

Կազմակերպության Վարչությունը բաղկացած է երեք անդամներից.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Հրաչյա Թոխմախյան	Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն	22 տարի
2	Անուշ Պետրոսյան	Վարչության անդամ, Գլխավոր ֆինանսական տնօրեն	15 տարի
3	Արտակ Միքայելյան	Վարչության անդամ,	21 տարի

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող



		Գլխավոր հաշվապահ	
--	--	------------------	--

Կազմակերպության վերստուգողն է Հովհաննես Հովհաննիսյանը:

Կազմակերպության աշխատակիցների թիվը 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 602, իսկ 2016 թվականի սեպտեմբերի դրությամբ կազմել է 579:

6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

Պարտավորումների տեսակը՝	անվանական արժեկտրոնային
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	կիսամյակային
Պարտավորումների ձևը՝	ոչ փաստաթղթային
Պարտավորումների փոխարկելիությունը՝	ոչ փոխարկելի
Պարտավորումների թողարկման ծավալը՝	մինչև 4,900,000,000 (չորս միլիարդ ինը հարյուր միլիոն) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար), ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը կկազմի դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ը
Մեկ պարտավորմանի անվանական արժեքը՝	ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Պարտավորումների քանակը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Պարտավորումների թողարկման և տեղաբաշխման օրը՝	
Պարտավորումների շրջանառության ժամկետը՝	
Պարտավորումների շրջանառության ձևը՝	բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԼՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ հրապարակվելու են Կազմակերպության, ինչպես նաև Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.finca.am, www.araratbank.am:

Կազմակերպության անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

7. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	30.09.2016 թվական ² (աուդիտ չանցած)	2015 թվական (աուդիտ անցած)	2014 թվական (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	374,834	45,063	570,774
Սեփական կապիտալի միջին մեծություն	5,967,403	5,812,287	5,434,925
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	6.28%	0.78%	10.50%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	374,834	45,063	570,774
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	31,020,736	29,291,518	26,655,665
Ակտիվների շահութաբերություն (ROA)%	1.21%	0.15%	2.14%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	374,834	45,063	570,774
Գործառնական եկամուտ	4,589,158	4,438,269	4,905,051
Զուտ շահույթի մարժա (NPM), %	8.2%	1.0%	11.6%
Գործառնական եկամուտ	4,589,158	4,438,269	4,905,051
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	31,020,736	29,291,518	26,655,665

² Տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն





ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
ՖԻՆԼՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից
թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսերի

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Թողարկող

Տեղաբաշխող

Ակտիվների օգտագործման գործակից (AU)	14.79%	15.15%	18.40%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	31,020,736	29,291,518	26,655,665
Սեփական կապիտալի միջին մեծություն	5,967,403	5,812,287	5,434,925
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.2	5.0	4.9
Զուտ տոկոսային եկամուտ	3,146,952	5,125,304	5,254,966
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	29,076,355	27,309,609	24,914,957
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	10.8%	18.8%	21.1%
Տոկոսային եկամուտ	5,049,975	8,090,993	7,638,770
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	29,076,355	27,309,609	24,914,957
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	17.4%	29.6%	30.7%
Տոկոսային ծախսեր	1,903,023	2,965,689	2,383,804
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	24,610,484	23,028,846	20,704,028
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	7.7%	12.9%	11.5%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	374,834	45,063	570,774
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	490,596	490,596	472,324
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	764	92	1,208
Սպրեդ	9.6%	16.7%	19.1%

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Կազմակերպության վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:



Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնվում է, որ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

Թողարկողի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը՝ պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժույթային ռիսկը՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում վնաս կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Թողարկողի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա:

Քանի որ Կազմակերպությունը նախատեսում է թողարկել նաև ԱՄՆ դոլարով արտահայտված

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

պարտատոմսեր, հետևաբար ներդրումները և ներդրումների մարումներն իրականացվելու են ԱՄՆ դոլարով: Ուստի, այս իմաստով արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր իրենց դրամական միջոցները նշված պարտատոմսերում ներդրումներ կատարելու նպատակով ստիպված կլինեն փոխարկել այլ արժույթներից ԱՄՆ դոլարի: Արտարժույթային ռիսկ է առաջանում նաև արժեկտրոնների վճարման ժամանակ, քանի որ արժեկտրոնը հաշվարկվում է արժեկտրոնների հաշվարկման օրվա նախորդ օրը ՀՀ ԿԲ հրապարակած փոխարժեքի հիման վրա, իսկ վճարումը տեղի է ունենում հաջորդ օրը, և մեկ օրվա մեջ հնարավոր է տեղի ունենա փոխարժեքի տատանում:

Տոկոսադրույքի ռիսկը, տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:



Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

9. Հիմնական տեղեկատվություն

Կազմակերպության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

10. Տեղեկատվություն Թողարկողի անվանական պարտատոմսերի վերաբերյալ

«ՖԻՆ.ՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ պարտատոմսերն անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր են, որոնց թողարկումն

	<p align="center">ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի</p>	
Թողարկող		Տեղաբաշխող

իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից:

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.5 և 7.6 կետերի պահանջները՝ «ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ-ն 2016 թվականի հուլիսի 25-ին դիմում է ներկայացրել ՀՀ ԿԲ Ֆինանսական վերահսկողության վարչություն՝ ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու համար բավարարում ստանալու նպատակով, ինչին ՀՀ ԿԲ-ն չի առարկել:

«ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ-ն նախատեսում է մինչև 2017 թվականի օգոստոսի 24-ը իրականացնել մինչև 4,900,000,000 (չորս միլիարդ ինը հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն:

Թողարկողն օգտվելու է շուկա ստեղծողի (market maker) ծառայություններից:



Պարտատոմսերը տեղաբաշխվելու են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

✓ Ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը:

✓ Իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

✓ Թողարկման օրվանից հաշված կիսամյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

✓ Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

✓ Կազմակերպության կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:

✓ Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:

✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:



✓ Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՄԲ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորներից որևէ մեկում ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Կազմակերպության պարտատոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների՝ հետևյալ դեպքերի համար.

	<p align="center">ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի</p>	
Թողարկող		Տեղաբաշխող

1. մասնավոր գործարքների համար, այն է՝ այնպիսի գործարքների, որոնց կողմերը նախապես հայտնի են, ընդ որում՝ ՀՀ ԿԲ խորհրդի 27 նոյեմբեր 2012 թվականի թիվ 331-Ն որոշման համաձայն՝ մասնավոր գործարքներ են համարվում՝

- ա. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կնքվող գործարքները,
- բ. Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,
- գ. Արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները:

2. պարտատոմսերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար,

3. շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար:



Կազմակերպության պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի միջոցով:

ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Կազմակերպության անվանական պարտատոմսերի թողարկման մասին Կազմակերպության խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

Թողարկողի պարտատոմսերի սեփականատերերին պարտատոմսերում կատարված ներդրումները մարվելու են պարտատոմսի անվանական արժեքով՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին:

Առաջարկվող պարտավորումների դասակարգման մասին տեղեկատվություն

Կազմակերպության առաջարկվող պարտատոմսերի մարումների և Կազմակերպության կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Կազմակերպությունը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ: Կազմակերպության սնանկության դեպքում Կազմակերպության գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ:



	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո 3-րդ և 4-րդ հերթին, մասնավորապես վերը նշված օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է պարտավորությունների մարման հետևյալ հերթականությունը.

Բանկի («Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ, ներդրումային ֆոնդի կառավարիչներ և ապահովագրական ընկերություններ, եթե «բանկ» բառի օգտագործման կոնկրետ դեպքից չի բխում, որ խոսքը միայն բանկի մասին է) պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

ա) առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,

բ) երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

գ) երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 10 միլիոն դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ, իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է կյանքի ապահովագրություն, և ոչ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն,

դ) չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,

ե) հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.



ե.1) վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

զ) յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության «գ», «դ» և «ե.1» ենթակետերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են «զ» ենթակետով սահմանված հերթում:

«գ» ենթակետով սահմանված անձի՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 10 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 10 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է «գ» ենթակետով սահմանված հերթում, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ «դ» ենթակետով սահմանված հերթում:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

Միևնույն հերթի պարտատերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

Պարտավորումների արժեկտրոնի փոկոսադրույքը և փոկոսների վճարման պայմանները

Պարտատոմսերի արժեկտրոնների տոկոսադրույքը սահմանվելու է յուրաքանչյուր տրանշի ժամանակ Կազմակերպության Խորհրդի առանձին որոշմամբ:

Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային եկամուտները վճարվելու են կիսամյակային պարբերականությամբ: Արժեկտրոնային եկամուտների վճարման փոխանցումը Կազմակերպության կողմից կատարվելու է արժեկտրոնի հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18⁰⁰-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Կազմակերպությունն արժեկտրոնային եկամտի վճարման օրը վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:



Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարվելու է պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18⁰⁰-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Կազմակերպությունը պարտատոմսերի մարման օրը համապատասխան վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին արժեկտրոնային եկամուտների վճարման կամ մարման գումարի փոխանցման անհնարինության դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցելու է նոտարի դեպոզիտ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը, ընդ որում, նոտարի դեպոզիտի ծառայության գումարը վճարվում/հատուցվում է հաճախորդի կողմից:

Պարտատոմսի տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվելու է հետևյալ կերպ՝

$$\text{ՊՏԵ} = (1 + S/L)^L - 1,$$

որտեղ՝

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԶԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

- 1) ՊՏԵ - տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունն է:
- 2) S - տարեկան արժեկտրոնների տոկոսադրույքն է:
- 3) < - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների վճարման հաճախականությունն է:

Թողարկվող և տեղաբաշխվող յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի համար Կազմակերպության և/կամ Տեղաբաշխողի ինտերնետային կայքերում՝ www.finca.am, www.araratbank.am Ազդագրի հրապարակումից հետո յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առաջ լրացուցիչ կիրառարկվի նաև տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը՝ հստակ ամսաթվերով:

Եթե արժեկտրոնային եկամտի վճարման օրը լինի ոչ աշխատանքային օր, ապա վճարումը կկատարվի հաջորդող աշխատանքային օրը:

Ծրագրային Ազդագրի շրջանակներում «ՖԻՆԶԱ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմելու է մինչև 4,900,000,000 (չորս միլիարդ ինը հարյուր միլիոն) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով) տեղաբաշխվող, ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը կկազմի դուրսով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ը: Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի գծով կիսամյակային արժեկտրոնային եկամտի հաշվարկը կկատարվի հետևյալ բանաձևով՝ (անվանական արժեք*արժեկտրոնային եկամտաբերություն*6*30/360):



Պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.

$$P = \frac{C}{f} \sum_{i=1}^N \left[\frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} \right] + \left[\frac{A}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}} \right]$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է՝ օրերի հաշվարկման պայմանականությունը փաստացի/փաստացի:

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԵԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

DCC - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է՝ օրերի հաշվարկման պայմանականությունը փաստացի/փաստացի:

P - պարտատոմսի գինն է:

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է ($f=2$ կիսամյակային վճարումների դեպքում):

N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է:

Y - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է:

C - տարեկան արժեկտրոնի չափը:

A - պարտատոմսի անվանական արժեքը:

i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում *i* արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ից մինչև *N* արժեքները (երբ *N*-ը ընդունում է 1 արժեք, *i* –ն նույնպես ընդունում է 1 արժեք):

Օրերի հաշվարկման պայմանականությունը՝ փաստացի/փաստացի.

DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1

DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2



որտեղ՝

D1M1Y1 - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է,

D3M3Y3 - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

«ՖԻՆԵԱ» ՈՒՎԿ ՓԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվելու են համաձայն Կազմակերպության խորհրդի 2016թ. նոյեմբերի 16-ի «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» թիվ 31/2016 որոշման, որով սահմանվել է թողարկել և պարտատոմսերի անվանական արժեքով տեղաբաշխել մինչև 4,900,000,000 (չորս միլիարդ ինը հարյուր միլիոն) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար) թողարկման ընդհանուր ծավալով, արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

(տրանշերով): ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը սահմանվել է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի համար սահմանվել է 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

Միաժամանակ, սահմանվել է, որ տեղաբաշխումը պետք է իրականացնել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:

Կազմակերպության Խորհրդի որոշմամբ սահմանվել է, որ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում՝ բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու հայտի՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կողմից մերժման դեպքի, որի պարագայում տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:

Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող պարտատոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը



Բանկի պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

- ✓ շահութահարկ
- ✓ եկամտային հարկ:

Շահութահարկ

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում, ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, իսկ ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով: Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ երկու դեպքում՝

- ↳ պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից (արժեկտրոնային եկամուտ) և

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

✎ պարտատոմսի վերավաճառքից (կապիտալի հավելված):



Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես, եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելված և այլն), ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

Եկամտային հարկ

Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները (այսուհետ՝ հարկ վճարողներ): Ընդ որում, ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում, ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որի կենսական շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունում է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունում է, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը (որտեղ բնակվում է նրա ընտանիքը) և նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի Պարտատոմսերից ստացված արժեկտրոնային եկամտից հարկվում են 10 տոկոս դրույքաչափով ֆիզիկական անձանց դեպքում, իսկ եթե ֆիզիկական անձը ներդրումներն իրականացնում է որպես անհատ ձեռնարկատեր, այս դեպքում հարկը հաշվարկվում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերով: Ընդ որում, Կազմակերպությունը պարտատոմսերի մարման ժամանակ ֆիզիկական անձանց համար կհանդիսանա հարկային գործակալ:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱՆԿԱՅԻՆ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալիս Կազմակերպությունը:

11. Առաջարկի ժամկետները և պայմանները

Առաջարկի պայմանները, ժամանակացույցը և առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ գործողությունները



Կազմակերպությունը մինչև 2017 թվականի օգոստոսի 24-ը ներառյալ թողարկելու է անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ մինչև 4,900,000,000 (չորս միլիարդ ինը հարյուր միլիոն) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար) թողարկման ընդհանուր ծավալով, արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով), ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը կկազմի դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ը:

ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը կազմելու է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերինը՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները կսահմանվեն Կազմակերպության Խորհրդի առանձին որոշումներով: Այդ մասին տեղեկատվությունը կիրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.finca.am, www.araratbank.am:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:

Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ պաշտոնական կայքում՝ www.nasdaqomx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն անհրաժեշտ է, որպեսզի ուսումնասիրեն Բորսայի տարբեր անդամների կողմից առաջարկվող պայմանները՝ իրենց

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՌԻՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող



համար օպտիմալ տարբերակ գտնելու և իրենց կողմից աճուրդին մասնակցելու գործընթացների վերաբերյալ առավել սպառիչ և մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

Գնորդները պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով գնման մրցակցային հայտեր են ներկայացնում տեղաբաշխման համակարգ՝ տեղաբաշխման օրվա ժամը 11⁰⁰-ից մինչև 13³⁰-ը: Գնորդներն իրավունք ունեն հետ կանչել կամ փոփոխել իրենց կողմից ներկայացված հայտերը և նոր հայտեր մուտքագրել մինչև 13³⁰-ը: Տեղաբաշխողի կողմից աճուրդի անցկացումը, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առքուվաճառքի գործարքների կնքման գործընթացը, տևում է մինչև տեղաբաշխման օրվա ժամը 15⁰⁰-ն: Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գների նվազման հաջորդականության: Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդն իրականացվելու է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով: Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված դրամական միջոցների սահմաններում, իսկ տեղաբաշխողը՝ նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում: Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում գնորդները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ՝ Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված ընթացակարգերի:

Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահմանափակում չկա: Գնորդը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը:

Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է չեղյալ համարվել Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով և «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերով և դեպքերում:

	<p>ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի</p>	
Թողարկող		Տեղաբաշխող

Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:

Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան «Տեղեկատվության բացահայտման կանոններին» համապատասխան կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումն իր պաշտոնական կայքում:

Թողարկողն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.finca.am, տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայացնելով առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը) և այլն:

Թողարկողի պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորի կողմից հաստատված կարգով և ժամկետներում:



Պարտատոմսերի տեղաբաշխման ծրագիրը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 1 (մեկ) ժամվա ընթացքում Բորսայի իրավասու ստորաբաժանումը Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ին համապատասխան ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականները և ուղարկում Բորսայի համապատասխան անդամին: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկանում են Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

Առաջարկի գինը

Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից տեղաբաշխման համակարգ են մուտքագրում պարտատոմսերի գնման հայտերը: Տեղաբաշխողը սահմանում է կտրման նվազագույն գին, որից ցածր գնով ներկայացված հայտերը չեն բավարարվում: Կտրման գնի վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար ներառվում է պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ հրապարակվող համապատասխան տրանշով թողարկվող պարտատոմսերի վերջնական պայմանների և հայտարարության մեջ:

Բորսայի անդամ հանդիսացող ներդրողներից տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվում են միջնորդավճարներ Բորսայի՝ «Սակագների մասին կանոններ»-ով սահմանված կարգով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվող միջնորդավճարների մասին կարող են տեղեկանալ Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

Տեղաբաշխում



Սույն Ազդագրով առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության (անդերոայթերի) մասնակցությամբ: Պարտատոմսերի տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի դեպքում պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (երաշխավորված կամ չերաշխավորված), պարտատոմսերի ծավալը, քանակը, պարտատոմսերի տեղաբաշխման կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի իրավունքներն ու պարտականությունները, Տեղաբաշխողին վճարման ենթակա գումարի չափն ու կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի պատասխանատվությունը կսահմանվեն վերջիններիս միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրերով:

Երաշխավորված տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման աճուրդի ժամանակ չտեղաբաշխված պարտատոմսերը ձեռք է բերում Տեղաբաշխողը սահմանված կտրման նվազագույն գնով:

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվելու են մասնագիտացված կազմակերպության՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից՝ համաձայն 16 նոյեմբերի 2016 թվականին վերջիններիս միջև կնքված պայմանագրի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, գրանցման համարը՝ 4, հեռ.՝ +(374 10) 59 23 23, ֆաքս՝ +(374 10) 54 78 94, էլ. փոստ՝ araratbank@araratbank.am, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ

	<p>ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԷԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի</p>	
Թողարկող		Տեղաբաշխող

ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.nasdaqomx.am: Տեղաբաշխումից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի առքուվաճառքի գործարք կնքելու համար ներդրողները պետք է դիմեն կա՛մ ներդրումային ընկերություններին, կա՛մ բրոքերային ծառայություն մատուցող բանկերին:



Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ, որոնք բացվում և սպասարկվում են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.nasdaqomx.am:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև ցանկացած բանկում իր անվամբ բացել դոլարային և դրամային բանկային հաշիվ՝ նման հաշիվներ չունենալու դեպքում և հաշիվների վերաբերյալ տվյալները ներկայացնել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ ռեեստրին պարտատոմսերում կատարված ներդրումների մարման և արժեկտրոնային եկամուտների վճարման համար:

12. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում դիմելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷԲՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ: Հարկ է նշել, որ հնարավոր է որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի հայտը չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո 60 օրվա ժամկետում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Կազմակերպության խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրն արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Թողարկողը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Կազմակերպության պարտատոմսերի շուկան ձևավորելու



	<p>ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱՆԻ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի</p>	
Թողարկող		Տեղաբաշխող

նպատակով: Շուկա ստեղծողը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի Հանրապետության ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով:

13. Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար որպես խորհրդատու հանդես է եկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Ներկայացված տեղեկատվությունն անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

Կազմակերպությանը և Կազմակերպության կողմից տեղաբաշխված պարտատոմսերին վարկանշող կազմակերպությունների կողմից որևէ վարկանիշ չի շնորհվել:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱՆԻ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Անկախ աուդիտորները

Կազմակերպության 2011 թվականի անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից, իսկ 2012, 2013, 2014 և 2015 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությունը:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն գրանցվել է Հայաստանում 2012 թվականի հոկտեմբերին: Վերջինիս վերջնական բաժնետերը և վերահսկողը Դելոյթ ԱՊՀ ՓԲԸ-ն է:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ հասցեն է՝

ՀՀ ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 10, տարածք 1/4, հեռ.՝ +374 10 52-88-99, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.bdoarmenia.am:

Կազմակերպության տնօրենն է Արթուր Անդրեասյանը:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ ք. Երևան 0010, Ամիրյան 4/6, հեռ.՝ +374 10 52-65-20, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.deloitte.ru:



Կազմակերպության Գործադիր տնօրեն-բաժնետեր է հանդիսանում Սրբուհի Հակոբյանը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում: Վերջին 4 տարիների ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

15. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ



 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

էական բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից՝ Թողարկողը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը.

- **Ընդհանուր տնտեսության ռիսկեր**, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Կազմակերպության վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Կազմակերպության հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Կազմակերպության գործունեության վրա: Դա կարտահայտվի Կազմակերպության կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Կազմակերպությունում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում է տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ: Նման վերլուծությունները և սցենարները քննարկվում են ԱՊԿԿ-ի ընթացքում, որն իրականացվում է ամիսը երկու անգամ: Նման հաճախականությունը հնարավորություն է տալիս արագ արձագանքել շուկայում սպասվող կամ տեղի ունեցող փոփոխություններին և մշակել գործունեության պլան փոփոխված իրավիճակին համապատասխան:

- **Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը**, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպությունների ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա և անգամ բացասաբար

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՌԻՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող



ազդել ֆինանսական ցուցանիշների վրա: Կազմակերպությունը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում:

• **Մրցակցային ռիսկ**, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: ՀՀ-ում վարկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են նաև արտերկրի վարկային կազմակերպությունների դուստր կառույցները, որոնք ունեն հզոր ֆինանսական կարողություններ և անկայուն իրավիճակներում ֆինանսական ներարկումներ ստանալու մեծ հնարավորություններ, առաջավոր և փորձարկված տեխնոլոգիաներ, որի շնորհիվ նրանք ունեն պոտենցիալ առավելություններ ստանալու հավակնություն: Կազմակերպությունը, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու առումով, հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է վարկավորման ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող սպասարկումների որակը և մատչելիությունը:

• **Կադրերի հոսունության ռիսկ**, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Կազմակերպության վնասներ կրելու հավանականությունը: Բարձրորակ մասնագետների առկայությունը Կազմակերպության աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի պատճառով՝ առաջանում է նաև կադրերի հոսունության ռիսկ, որի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով՝ Կազմակերպության ղեկավարությունը նպատակային և հետևողական միջոցառումներ է իրականացնում աշխատողների որակավորման բարձրացման, նյութական խրախուսման և սոցիալական ապահովման խնդիրների բարելավման ուղղությամբ: Մասնավորապես, աշխատողների որակավորման բարձրացման նպատակով Կազմակերպությունը ստեղծել է ներքին աշխատակիցների օգտագործման համար նախատեսված առցանց դասընթացների հարթակ, իսկ ՖԻՆԸԱ Զարգացման Ակադեմիայի միջոցով կազմակերպում է միջին օղակի ղեկավարների վերապատրաստման համար դասընթացներ:

• **Վարկային ռիսկ**: Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք Կազմակերպությանը կարող են կորուստներ պատճառել:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Թողարկողը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը, ինչի շնորհիվ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը պորտֆելում բավականին փոքր է:

Հաճախորդներին տրված վարկեր	30.09.2016	31.12.2015	31.12.2014
Ոչ ժամկետանց	24,535,738	27,887,311	26,131,725
ժամկետանց՝			
- 1-ից 30 օր ժամկետանց	210,969	255,053	112,108
- 31-ից 60 օր ժամկետանց	147,908	160,358	73,193
- 61-ից 90 օր ժամկետանց	110,276	129,235	51,832
- 91-ից 180 օր ժամկետանց	302,725	269,333	131,766
- 181-ից 270 օր ժամկետանց	209,216		
Ընդամենը համախառն վարկեր	25,516,832	28,701,290	26,500,624
Հնարավոր կորուստների պահուստ	(832,662)	(460,744)	(262,892)
Խնդրահարույց վարկեր/Վարկային պորտֆել	3.84%	2.84%	1.39%

Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսավորման կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Կազմակերպությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային կոմիտեների և Կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից: Առօրյա ռիսկերի կառավարումն իրականացվում է վարկային ռիսկերի բաժնի, հետգործառնական և ներքին վերահսկողության բաժինների կողմից:

Կազմակերպության վարկային քաղաքականությունը սահմանված է Վարկային ձեռնարկում, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող ընթացակարգերը և պահանջները համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիտորինգը, ժամկետանց վարկերի հետ աշխատելու գործընթացը և այլն:

Վարկային կոմիտեն վերլուծող մարմին է, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը վերլուծելու և վարկային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկային կոմիտեն Կազմակերպության ներսում անկախ մարմին է, որը լիազորված է կայացնելու վերջնական որոշում վարկային հայտը ֆինանսավորելու կամ մերժելու վերաբերյալ:



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից
թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսերի



Թողարկող

Տեղաբաշխող

Կազմակերպությունը բաշխում է վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի գծով կամ վարկառուների խմբի գծով: Վարկային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Տնօրենների խորհուրդը և Կազմակերպության Գործադիր մարմինը: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ ապահովելու համար, որ Կազմակերպության կողմից սահմանված վարկային սահմանաչափերը և վարկունակության ուղեցույցները չեն խախտվում:

Ըստ նպատակահարմարության, և վարկերի մեծ մասի դեպքերում, Կազմակերպությունն ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Վարկերի զգալի մասն անհատական են, որտեղ որպես ապահովության միջոց հանդես են գալիս երաշխավորությունները: Այսպիսի ռիսկերը մոնիթորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

Վերանայված պայմաններով վարկերն իրենցից ներկայացնում են վարկեր, որոնք վերակառուցվել են՝ վարկառուի ֆինանսական դրության վատթարացման արդյունքում, և Կազմակերպությունը կատարել է զիջումներ, որոնք այլապես չէր դիտարկի: Վարկի վերակառուցման դեպքում այն մնում է այդ կատեգորիայում անկախ նրանից, որ վերակառուցումից հետո դրա կատարողականը եղել է բավարար:



Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	30 սեպտեմբերի, 2016թ.	31 դեկտեմբերի, 2015թ.	31 դեկտեմբերի, 2014թ.
Հաճախորդներին տրված վարկեր /հազ. ՀՀ դրամ/	723,802	763,757	182,198

Ընկերության վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է անհատական ռիսկերից, ինչպես նաև ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին՝ նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

	30 սեպտեմբերի, 2016թ.	31 դեկտեմբերի, 2015թ.	31 դեկտեմբերի, 2014թ.
Դրամական միջոցներ և դրանց	2,129,287	627,333	2,187,739

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

համարժեքներ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	0	4,144	106,065
Հաճախորդներին տրված վարկեր	24,684,170	28,240,546	26,237,732
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,233,886	948,971	-
Ընդամենը	24,084,884	29,820,994	28,531,536

Կազմակերպությունը սկզբունքորեն կիրառում է ռիսկերի կառավարման միևնույն քաղաքականությունը հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար:

Կազմակերպությունում մշակվել է վարկառուի գնահատման կենտրոնացված մոտեցում՝ փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությունները գնահատելու և դրանց վարկավորման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով: Այդ մոտեցումը ենթադրում է ստանդարտ վարկատեսակների հաստատում գլխամասային գրասենյակի կողմից՝ ելնելով վարկառուների արդյունավետության հիմնական ցուցանիշներից՝ վարկային պատմությունից, ֆինանսական վիճակից, վարկառուների հետ հարաբերություններից, կառավարման որակից, նպատակային օգտագործումից, գրավից և այլն:

• **Իրացվելիության ռիսկ:** Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնասներ կրելու ռիսկը:

Կազմակերպության իրացվելիությունը գտնվում է տնօրինության ուշադրության կենտրոնում, մասնավորապես Կազմակերպությունում գործում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որը վերահսկում է Կազմակերպության իրացվելիության ռիսկերը



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից
թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսերի



Թողարկող

Տեղաբաշխող

Ժամկետայնության վերլուծության միջոցով: Ընթացիկ իրացվելիությունը կառավարվում է գանձապետի կողմից, ով վարում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների պորտֆելը, որը հիմնականում բաղկացած է կարճաժամկետ ավանդներից, ընթացիկ իրացվելիության աջակցման և դրամական հոսքերի օպտիմալացման նպատակով:

Կազմակերպության դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն երկարաժամկետ և միջնաժամկետ ժամկետային փոխառություններ, ինչպես նաև դրամական միջոցների կարճաժամկետ ներգրավումներ ՀՀ բանկերից:



Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Կազմակերպության ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետային կառուցվածքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Մարման ժամանակահատվածը					
	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-2 տարի	2 տարուց ավելի	Ընդամենը
Տեղաբաշխված միջոցներ	2,528,527	3,241,816	13,722,307	9,245,077	1,642,088	30,379,815
Ներգրավված միջոցներ	5,306,142	3,227,773	8,706,627	3,452,663	4,296,614	24,989,819
Ակտիվների և պարտավորությունների կուտակային իրացվելիության տարբերություն (GAP)	-2,777,615	14,043	5,015,680	5,792,414	-2,654,526	5,389,996

Կազմակերպությունը հնարավորինս ձգտում է համադրել իրացվելիության ռիսկի նվազեցման և իրացվելիության արդյունավետ կառավարման սկզբունքները՝ ՀՀ բանկերից ներգրավելով վարկային գծեր: Ազդագրի ԿԲ ներկայացման օրվա դրությամբ Կազմակերպությունը երկու ՀՀ առևտրային բանկերից ունի չօգտագործված վերականգնվող վարկային գծեր՝ ընդհանուր 4,000,000 ԱՄՆ դոլարի չափով:

Միաժամանակ Կազմակերպությունը ներկայումս բանակցում է երկու խոշոր միջազգային կառույցների հետ, որոնցից մեկը Ասիական Զարգացման Բանկն է՝ 12,000,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի երկարաժամկետ փոխառություններ ներգրավելու ուղղությամբ: Տվյալ փոխառության պայմանագրերի ստորագրումն էականորեն նվազեցնելու է Կազմակերպության իրացվելիության ռիսկը, ինչպես նաև ամրագրելու է Կազմակերպության դրամական միջոցների 2017 թվականի պահանջի ավելի քան 50%-ը:

Ստորև ներկայացված են 2016 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների կուտակային իրացվելիության տարբերությունները՝ աճողական կարգով:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

	Մարման ժամանակահատվածը					
	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-2 տարի	2 տարուց ավելի	Ընդամենը
Տեղաբաշխված միջոցներ	4,734,949	2,783,491	10,703,760	7,551,276	3,022,430	28,795,906
Ներգրավված միջոցներ	661,458	6,381,204	5,421,816	6,796,212	4,082,405	23,343,095
Ակտիվների և պարտավորությունների կուրակային իրացվելիության տարբերություն (GAP)	4,073,491	-3,597,713	5,281,944	755,064	-1,059,975	5,452,811

• **Տոկոսադրույքի ռիսկ:** Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, որն էլ իր հերթին կարող է ազդել Կազմակերպության զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Կազմակերպության ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև այն նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Կազմակերպությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիթորինգ, գնահատում է Կազմակերպության իրական արժեքով տոկոսադրույքի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունը Կազմակերպության շահութաբերության վրա:

Զգայունության վերլուծություններն իրականացվել են՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ոչ ածանցյալ գործիքների գծով տոկոսադրույքի ռիսկը:

Լողացող տոկոսադրույքով պարտավորությունների համար վերլուծությունները պատրաստվել են՝ ենթադրելով, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված պարտավորության գումարն այդպիսին է եղել ամբողջ տարվա ընթացքում: Հիմնական ղեկավար անձնակազմին տոկոսադրույքի ռիսկի փոփոխությունը ներկայացնելիս օգտագործվում է 200 բազիսային կետով աճ կամ նվազում, և ներկայացնում է ղեկավարության գնահատականը՝ տոկոսադրույքի գծով հնարավոր փոփոխությունների վերաբերյալ:



Եթե տոկոսադրույքները լինեին 200 բազիսային կետով ավելի բարձր կամ ցածր, և բոլոր մնացած փոփոխականները լինեին հաստատուն, ապա Կազմակերպության եկամուտը 2015 թվականին ավարտված տարվա համար կաճեր/կնվազեր 151,255 հազար ՀՀ դրամի չափով (2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 46,660 հազար ՀՀ դրամի չափով):

• **Արտարժույթային ռիսկ:** Արտարժույթային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Կազմակերպությունը կիրառում է արտարժույթային ռիսկի կառավարման հետևյալ սկզբունքները.

↪ Կազմակերպությունը ձգտում է միանգամից փակել արտարժույթային դիրքերը և զերծ մնալ սպեկուլյատիվ գործառնություններից:

↪ Կազմակերպությունն արտարժույթային շուկաներում չի բացում սպեկուլյատիվ դիրքեր: Ածանցյալ գործիքները կարող են օգտագործվել միայն հեջավորման նպատակով՝ փակելու դիրքը:

↪ Կազմակերպությունը ձգտում է համապատասխանեցնել ակտիվների և պարտավորությունների արժույթներն ինչպես գումարներով, այնպես էլ ժամկետներով՝ պաշտպանված լինելու համար փոխարժեքային տատանումներից:

↪ Կազմակերպությունը վերահսկում է արտարժույթային դիրքն օրական:

Կազմակերպության Գանձապետարանը ու Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը վերահսկում են արտարժույթի ռիսկը՝ կառավարելով արժույթային բաց դիրքն ԱՄՆ դոլարի արժեզրկման և այլ մակրոտնտեսական ցուցանիշների գնահատումների հիման վրա, ինչը Կազմակերպությանը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել վնասներն ազգային արժույթի նկատմամբ փոխարժեքի զգալի տատանումներից: Գանձապետն իրականացնում է Կազմակերպության արժույթային բաց դիրքի ամենօրյա մոնիթորինգ:

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Կազմակերպության վրա 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</i>	521,629	600,412	68,257	1,190,298



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից
թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսերի





Թողարկող

Տեղաբաշխող

Հաճախորդներին տրված վարկեր	15,574,235	12,666,311	-	28,240,546
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	948,971	-	948,971
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16,095,864	14,215,694	68,257	30,379,815
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Փոխառու միջոցներ	7,446,242	15,259,784	-	
Այլ ֆինանսական պարտավորություններ	74,727	63,443	-	
Ստորադաս փոխառություն	-	1,231,024	-	
Պարտավորություններ հեղձանման պայմանագրերով	914,599	-	-	
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	8,435,568	16,554,251	-	24,989,819
Հաշվեկշռային բաց դիրք	7,660,296	(2,338,557)	68,257	5,389,996
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Համախառն մարվող արժույթային սվոփեր	(2,990,347)	2,902,500	-	(87,847)
Բաց դիրք	4,669,949	563,943	68,257	5,302,149

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Կազմակերպության վրա 2016թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,339,835	454,814	83,201	2,877,850
Հաճախորդներին տրված վարկեր	10,676,877	14,007,293		24,684,170
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		1,233,886		1,233,886
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	13,016,712	15,695,993	83,201	28,795,906
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Փոխառու միջոցներ	6,237,781	15,130,904		21,368,685
Այլ ֆինանսական պարտավորություններ	57,177	99,431		156,608
Ստորադաս փոխառություն		1,250,638		1,250,638
Պարտավորություններ հեղձանման պայմանագրերով		567,164		567,164
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	6,294,958	17,048,137	0	23,343,095
Հաշվեկշռային բաց դիրք	6,721,754	-1,352,144	83,201	5,452,811
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

<i>Համախառն մարվող արժույթային սվոփեր</i>	-1,535,452	1,518,272		-17,180
Բաց դիրք	5,186,302	166,128	83,201	5,435,631

• **Գործընկերոջ ռիսկ:** Գործընկերոջ ռիսկի սահմանաչափին իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ: Կազմակերպությունը գործընկերոջ ռիսկը կառավարում է համաձայն Խորհրդի կողմից հաստատված Գործընկերոջ ռիսկի կառավարման, Ներդրումային քաղաքականության և Դուստր կազմակերպության ընդհանուր քաղաքականության ձեռնարկի սկզբունքների համաձայն: Կազմակերպությունը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝



☞ Սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով:

☞ Կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը: Հաստատման գործընթացը ներառում է բազմակողմանի գնահատում՝ ապահովելու գործընկերոջ հաստատման գործընթացի համապատասխանությունը Դուստր կազմակերպության ընդհանուր քաղաքականության ձեռնարկին:

☞ Սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Սահմանաչափերի ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կողմից:

• **Գործառնական ռիսկ:** Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառնությունները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Կազմակերպության հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգող հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Կազմակերպությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԵԼԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

Կազմակերպությունում գործառնական ռիսկը կառավարվում է այդ գործառույթի համար նախատեսված ստորաբաժանման՝ «Ներքին վերահսկողության» բաժնի կողմից: Գործառնական ռիսկերի կառավարման համար մշակված են և պարբերաբար վերանայվում են բազում հսկողական մեխանիզմներ, ինչպիսիք են՝ ռիսկային դեպքերի վերաբերյալ ազդակներ հաղորդող հատուկ մշակված 17 հաշվետվությունները գործընթացների մշակման, գրանցման և հաստատման գործառույթների բաժանումը տարբեր աշխատակիցների միջև, ամենամսյա այցելությունները մասնաճյուղեր և տվյալ տարածաշրջանի հաճախորդներին:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Կազմակերպությունը պատրաստ է իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով ապահովել ծրագրավորված ակտիվապասիվային և եկամտային ցուցանիշների կատարումը:

16. Տեղեկատվություն Թողարկողի մասին

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆԵԼԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն:

ռուսերեն՝ «ФИНКА» Универсальная Кредитная Организация Закрытое Акционерное Общество.

անգլերեն՝ “FINCA” Universal Credit Organizaton Closed Joint-Stock Company.

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆԵԼԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ռուսերեն՝ «ФИНКА» УКО ЗАО

անգլերեն՝ “FINCA” UCO CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝



ՀՀ, ք. Երևան, Ազաթանգեղոսի փ. 2ա, գրանցման համարը՝ 13:

Թողարկողի գործառնական վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ազաթանգեղոսի փ. 2ա:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 54 55 31, (+374 10) 54 55 32,

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

Ֆաքս՝ (+374 10) 58 48 63,
 էլ. փոստ՝ inform@finca.am,
 ինտերնետային կայք՝ www.finca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:

Կազմակերպությունը վարկային կազմակերպության գործունեությունը սկսել է իրականացնել հիմնադրման պահից՝ 2006 թվականի մարտ ամսից, ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել վարկավորման սահմանափակ հնարավորություններ և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության ստեղծումը նպատակ էր հետապնդում տրամադրել միկրոֆինանսական ծառայությունների լայն տեսականի՝ նպատակ ունենալով կրճատել աղքատությունը, բարձրացնել զբաղվածության մակարդակը, խթանել ձեռներեցությունն ու Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական համախմբումը, ինչպես նաև ստանալ շահույթ, որը հիմնականում պետք է ուղղվի այդ նպատակների իրագործմանը:

Կազմակերպությունը հիմնադրվել է ՀՀ օրենսդրության շրջանակներում 2006թ. մարտի 28-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ ԿԲ խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական: Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆ.ՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպությունն ունի 37 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում:



Իր գործունեության սկզբից ի վեր Կազմակերպությունն իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ չի կատարել և մոտ ապագայում չի նախատեսում իրականացնել:



Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

30.09.2016թ. դրությամբ Կազմակերպությունն ունի 37 մասնաճյուղ, որոնց ցանկը և գործունեության հասցեները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1.	Ագաթանգեղոս մասնաճյուղ	ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2 ա
2.	Կոմիտաս մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի պող. 59 շենք, 5
3.	Մալաթիա մասնաճյուղ	ք. Երևան, Րաֆֆու փ. 29/3
4.	Աշտարակ մասնաճյուղ	ք. Աշտարակ, Սիսակյան փ. 14/48բ
5.	Արտաշատ մասնաճյուղ	ք. Արտաշատ, Շահումյան փ. 33
6.	Ապարան մասնաճյուղ	ք. Ապարան, Մ. Բաղրամյան փ. 24
7.	Թալին մասնաճյուղ	ք. Թալին, Շահումյան փ. 1, հյուրանոց
8.	Արարատ մասնաճյուղ	ք. Արարատ, Աղբյուր Սերոբ փ. 10, 10/1-1
9.	Մասիս մասնաճյուղ	ք. Մասիս, Հանրապետության փ. 5/1
10.	Վեդի մասնաճյուղ	ք. Վեդի, Արարատյան փ. 54/6
11.	Արմավիր մասնաճյուղ	ք. Արմավիր, Երևանյան փ. 33/3
12.	Էջմիածին մասնաճյուղ	ք. Էջմիածին, Խորենացու փ. 8
13.	Մյասնիկյան մասնաճյուղ	գ. Մյասնիկյան, Մյասնիկյան փ., թիվ 42
14.	Ճամբարակ մասնաճյուղ	ք. Ճամբարակ, Սեպտեմբերի 21 փ., 2
15.	Մարտունի մասնաճյուղ	ք. Մարտունի, Մյասնիկյան փ. 8
16.	Վարդենիս մասնաճյուղ	ք. Վարդենիս, Հ. Անդրեասյան փ. 6/5
17.	Ալավերդի մասնաճյուղ	ք. Ալավերդի, Թումանյան փ. 51/2
18.	Սպիտակ մասնաճյուղ	ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փ. 2
19.	Ստեփանավան մասնաճյուղ	ք. Ստեփանավան, Սուրբ-Նշանի փ. 12բ
20.	Վանաձոր 1 մասնաճյուղ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծ պող. 22գ
21.	Տաշիր մասնաճյուղ	ք. Տաշիր, Երևանյան փ. 199
22.	Աբովյան մասնաճյուղ	ք. Աբովյան, Հանրապետության փ 22/14
23.	Եղվարդ մասնաճյուղ	ք. Եղվարդ, Չարենցի փ., թիվ 23/2
24.	Հրազդան մասնաճյուղ	ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Օգոստոսի փ. 23, թիվ 22
25.	Աշոցք մասնաճյուղ	Աշոցքի համայնք, Ռուտակովի փ. 3
26.	Արթիկ մասնաճյուղ	ք. Արթիկ, Անկախության փ. 29/1
27.	Գյումրի մասնաճյուղ	ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ փ. 46ա
28.	Մարալիկ մասնաճյուղ	ք. Մարալիկ, Հ. Շահինյան փ. 16
29.	Գորիս մասնաճյուղ	ք. Գորիս, Մաշտոցի փ. 5
30.	Կապան մասնաճյուղ	ք. Կապան, Մանուկյան փ., 2.3
31.	Մեղրի մասնաճյուղ	ք. Մեղրի, Փարամազ փ. 4/6
32.	Եղեգնաձոր մասնաճյուղ	ք. Եղեգնաձոր, Անդրանիկի փ. 10/1

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

33.	<i>Բերդ մասնաճյուղ</i>	ք. Բերդ, Նահապետի փ. թիվ 8
34.	<i>Դիլիջան մասնաճյուղ</i>	ք. Դիլիջան, Մյասնիկյանի փ. 30Ե
35.	<i>Իջևան մասնաճյուղ</i>	ք. Իջևան, Վալանսի փ. 6/2
36.	<i>Նոյեմբերյան մասնաճյուղ</i>	ք. Նոյեմբերյան, Բարեկամության փ. 2
37.	<i>Գավառ մասնաճյուղ</i>	ք. Գավառ, Կենտրոնական փ. 4

Կազմակերպությունը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

17. Բիզնեսի նկարագիրը

Հիմնական գործունեությունը

Թողարկողն իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և իր Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ: Կազմակերպությունը կարող է իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, անհատ ձեռնարկատերերից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ:

Կազմակերպության գործունեության հիմնական ուղղվածությունը վարկերի տրամադրումն է, որոնք էլ ձգտում է հասանելի դարձնել տնտեսության տարբեր հատվածների, ինչպես նաև հասարակության լայն շրջանակների համար: Կազմակերպությունը, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Ավելին, որպես պատասխանատու վարկատու, Կազմակերպությունը հոգ է տանում, որպեսզի դժբախտ պատահարների դեպքում չմարված վարկային պարտավորությունները չփոխանցվեն իր հաճախորդների ժառանգներին: Կազմակերպությունն անվճար ապահովագրություն է տրամադրում մինչև 350,000 ՀՀ դրամ կամ 750 ԱՄՆ դոլար ներառյալ գումարի չափով վարկ ստացած անձանց, այն դեպքերում, երբ դժբախտ պատահարների կամ հիվանդությունների հետևանքով առաջացնում է Վարկառուի մահը: Վարկառուների պարտքի անվճար ապահովագրության ծառայությունը Կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության վարկային շուկայում առաջարկվող նորարարական ծառայություն է՝ կազմակերպության բոլոր ներկա և նոր վարկառուների համար:

Վարկառուի հնարավոր մահվան դեպքում վարկի չմարված գումարը վարկառուի փոխարեն




«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն վճարում է Կազմակերպությանը, Վարկառուի ընտանիքի անդամներն ազատվում են բոլոր պարտավորություններից, Վարկառուի պարտքն ապահովագրվում է միայն այն դեպքում, եթե առկա է վարկառուի գրավոր համաձայնությունը:

2013 թվականի հոկտեմբերից Կազմակերպությունը հաճախորդներին մատուցում է տարադրամի փոխանակման ծառայություն, ինչը Կազմակերպության հաճախորդներին և համայնքների բնակիչներին առավել հարմարավետ և բազմատեսակ սպասարկման հնարավորություն է տալիս:

Ֆինանսական գործառնությունները Կազմակերպության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով կանխիկ և անկանխիկ եղանակներով:


Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի և փոխառությունների ծավալների աճի դինամիկան ներկայացվում է ստորև.



Ինչպես տեսնում ենք Կազմակերպության վարկային պորտֆելն արձանագրել է կայուն դինամիկ աճ, մասնավորապես 2015 թվականին 2009 թվականի համեմատ աճը կազմել է ավելի քան 282%, իսկ տարեկան միջինում Կազմակերպության վարկային պորտֆելն աճել է ավելի քան 40%-ով:

Կազմակերպության կողմից հաճախորդներին տրված վարկերն ըստ վարկատեսակների ներկայացվում է ստորև.

**Հաճախորդներին տրամադրված վարկերն ըստ վարկատեսակների
առ. 31.12.2015թ.**




- Անհատական գյուղատնտեսական վարկեր
- Անհատական քիզնես վարկեր
- Խմբային գյուղատնտեսական վարկեր
- Խմբային քիզնես վարկեր

Կազմակերպությունը սույն թվականի հունվարի 1-ից դադարեցրել է խմբային վարկերի տրամադրումը՝ հաշվի առնելով տվյալ վարկատեսակի նկատմամբ հաճախորդների կողմից նվազող պահանջարկը:

Հաճախորդներին տրված վարկերը 30.09.2016 թվականի դրությամբ կազմել են ավելի քան 24.3 մլրդ. ՀՀ դրամ, որոնք ըստ վարկատեսակների ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը.

**Հաճախորդներին տրամադրված վարկերն ըստ
վարկատեսակների առ. 30.09.2016թ.**





- Անհատական գյուղատնտեսական վարկեր
- Անհատական քիզնես վարկեր
- Խմբային գյուղատնտեսական վարկեր
- Խմբային քիզնես վարկեր
- Անհատական սպառողական վարկեր



Առաջիկա տարիներին Կազմակերպությունը նախատեսում է ակտիվ միջոցառումներ իրականացնել վարկային պորտֆելի մեծացման և բարձր որակի ապահովման ուղղությամբ: Միաժամանակ Կազմակերպությունը քայլեր է ձեռնարկելու վարկային պրոդուկտները և տրամադրվող ֆինանսական ծառայությունները բարելավելու ուղղությամբ:

Հիմնական գործունեությունը

«Քինանսական շուկայում կազմակերպությունն առանձնանում է միկրոֆինանսական ծառայությունների լայն տեսականու մատուցմամբ՝ նպատակ հետապնդելով կրճատել աղքատությունը, բարձրացնել զբաղվածության մակարդակը, խթանել ձեռներեցությունն ու Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական համախմբումը: Ստորև ներկայացվում է հաճախորդներին տրամադրված վարկերն ըստ տնտեսության ոլորտների՝ համապատասխանաբար 31.12.2015 և 30.09.2016 թվականների համար.



Ինչպես տեսնում ենք Կազմակերպության վարկային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ են կազմում գյուղատնտեսության, առևտրի և արդյունաբերության ոլորտներին տրամադրված վարկերը, համապատասխանաբար 50.7%, 22.7% և 6.2%:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
		Թողարկող Տեղաբաշխող

Վարկային կազմակերպությունների ընդհանուր վարկային ներդրումներում Թողարկողի վարկային պորտֆելի մասնաբաժինը 2011-30.09.2016թթ.-ին հետևյալն է.



	31.12.2011	31.12.2012	31.12.2013	31.12.2014	31.12.2015	30.09.2016
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներ	81,054	113,504	137,143	167,351	180,649	180,586
Թողարկողի վարկային ներդրումներ	14,720	17,699	22,872	26,238	28,240	24,684
Թողարկողի մասնաբաժինը (%)	18.16%	15.59%	16.68%	15.68%	15.63%	13.67%

Թողարկողի դիրքն այլ վարկային կազմակերպությունների համեմատ 30.06.2016 թվականի դրությամբ հետևյալն է.

Հ/Հ	Ակտիվներ	Վարկային ներդրումներ	Պարտավորություններ	Ընդհանուր կապիտալ	Կանոնադրական կապիտալ	Զուտ շահույթ
1	30,289,245	25,994,906	24,445,751			
2				5,843,494	4,905,960	
3						206,895
4						
5						
.						
.						
.						
23						
24						
25						

Աղյուսակից ակնհայտ երևում է, որ Թողարկողը հիմնական ֆինանսական ցուցանիշներով վարկային կազմակերպությունների մեջ ամուր տեղ է զբաղեցնում առաջին եռյակում, մասնավորապես՝ Ակտիվներով, Վարկային ներդրումներով և Պարտավորություններով 1-ինն է, Կապիտալով 2-րդը, իսկ Զուտ շահույթի ցուցանիշով զբաղեցրել է 3-րդ հորիզոնականը:


Թողարկողի իրական դիրքը գնահատելու համար հաշվարկին չեն մասնակցել ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստեղծված վերաֆինանսավորում իրականացնող՝ «Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» վարկային կազմակերպությունները:



 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՁԴԱԳԻՐ ՖԻՆԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

18. Թողարկողի կառուցվածքը

Կազմակերպությունը հանդիսանում է FINCA International Inc. անդամ, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Վաշինգտոնում և որն ունի մասնաճյուղեր/դուստր ընկերություններ Աֆրիկայի, Եվրասիայի, Միջին Արևելքի և Հարավային Ամերիկայի 22 երկրներում: Ստորև ներկայացվում է Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը:

"ՖԻՆԲԱ" ՈՒՎԿ ՓԲԸ կազմակերպական կառուցվածք



 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

19. Հիմնական միջոցները

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի հանրագումարը չի գերազանցում Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: 30.09.2016 թվականի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 390.6 մլն.

«Ն դրամ:

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ չկան:

2016 թվականի սեպտեմբերի 30-ի³ դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցներն ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը.



հազ. «Ն դրամ

	Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Կապի և հաղորդակցման միջոցներ	Գրասենյակային գույք	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	327,440	271,764	304,571	76,546	219,812	1,200,133
Կուտակված մաշվածություն	156,071	229,863	207,431	70,806	145,321	809,492
Հաշվեկշռային արժեք	171,369	41,901	97,140	5,740	74,491	390,641

20. Զարգացման վերջին միտումները

Տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող զարգացումներով պայմանավորված Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների սակագները պարբերաբար վերանայվում են՝ նպաստելով վերջիններիս մրցունակության բարձրացմանը և մատչելիության ապահովմանը:

³ Տվյալներն աուդիտի կողմից ստուգված չեն

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Թողարկողի ակտիվապասիվային հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն, որը ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

հազ. ՀՀ դրամ

Միջոցների ներգրավում	30.09.2016	31.12.2015	31.12.2014
Վարկեր բանկերից և ֆինանսական հաստատություններից	20,883,736	22,706,026	22,486,767
Ստորադաս փոխառություններ	1,250,638	1,231,024	1,206,843
Պարտավորություն հետգնման պայմանագրերի գծով	567,164	914,599	0



Միջոցների տեղաբաշխում	30.09.2016	31.12.2015	31.12.2014
Հաճախորդներին տրված վարկեր	24,684,170	28,240,546	26,237,732
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	1,233,886	948,971	0

Թողարկողի գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Կազմակերպության տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի www.finca.am «Հաշվետվություններ» բաժնում:

21. Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Կազմակերպությունը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ↪ Կազմակերպության գործունեությունը նպատակամղել շահույթի, բաժնետիրական կապիտալի և ակտիվների եկամտաբերության աճին,
- ↪ Կազմակերպության ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով Կազմակերպության ռիսկերը, պահպանելով վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,
- ↪ ապահովել Կազմակերպության դինամիկ զարգացման համար անհրաժեշտ մասնաճյուղերի

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	
Թողարկող		Տեղաբաշխող

ստեղծում, տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիականացում,
 ✦ ապահովել Կազմակերպության զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,

✦ Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր:



Կազմակերպությունը կանխատեսել է 2016 թվականի գործունեության արդյունքում ստանալ 514,685 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ, իսկ մինչև 2020 թվականը զուտ շահույթի ցուցանիշը հասցնել 793,284 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ✦ Կազմակերպության ներգրավող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
- ✦ Կազմակերպության ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
- ✦ Կազմակերպության տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումներ,
- ✦ Կազմակերպության անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,
- ✦ Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր,
- ✦ Նոր ծառայությունների ներդրման ծախսեր:

Կազմակերպության կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ✦ ներգրավվող միջոցների և վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ,
- ✦ արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ,
- ✦ անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կազմակերպության բնականոն գործունեությունը):


	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

22. Թողարկողի կառավարման մարմինները

Կազմակերպության կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները.

- ✓ Բաժնետերերի ժողով,
- ✓ Տնօրենների խորհուրդ,
- ✓ Վարչություն,
- ✓ Գլխավոր տնօրեն:

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.





Կազմակերպության Կանոնադրությամբ Կազմակերպության կառավարման մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները.

Բաժնետերերի ժողովը (Ժողով)

Ժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

- ա) Կազմակերպության Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
- բ) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշումներ կայացնելը,
- գ) Կազմակերպության լուծարման մասին որոշումներ կայացնելը, լուծարման հանձնաժողով նշանակելը, լուծարման պլանի, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
- դ) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- ե) Թողարկված բաժնետոմսերի առավելագույն քանակի որոշումը,

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

զ) Հայտարարված բաժնետոմսերի քանակի, անվանական արժեքի, տեսակների, և այդ բաժնետոմսերի սեփականատերերին վերապահված իրավունքների որոշումը,

է) Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով Կազմակերպության Կանոնադրական կապիտալի ավելացումը,

ը) Կազմակերպության բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, ընդհանուր քանակի կրճատման նպատակով Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Կազմակերպության կողմից ձեռքբերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

թ) Կազմակերպության Վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ժ) Կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության անդամների վարձատրության չափի և պայմանների որոշումը,

ժա) Արտաքին աուդիտորի հաստատումը,

ժբ) Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության տարեկան արդյունքների հաստատումը,

ժգ) Բաժնետերերի ժողովի անցկացման կարգի որոշումը,

ժդ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ առաջին եռամսյակի, կիսամյակի, ֆինանսական տարվա առաջին ինը ամիսների արդյունքների հիման վրա շահութաբաժինների վճարման մասին որոշման կայացումը, ինչպես նաև դրանց գումարի, վճարման ձևի և ամսաթվի որոշումը,



ժե) Օրենքով սահմանված կարգով խոշոր գործարքների կնքման թույլատրումը,

ժզ) Օրենքով սահմանված դեպքերում Կազմակերպության թողարկված բաժնետոմսերի ձեռքբերման թույլատրումը,

ժէ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ բաժնետոմսերի համախմբման կամ բաժանման մասին որոշումը,

ժը) Կազմակերպության Վարչության կազմի հաստատումը,

ժթ) Հայաստանի օրենսդրությամբ ժողովին վերապահված այլ իրավասությունների իրականացումը:



 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

Տնօրենների խորհուրդը (խորհուրդ)

Կազմակերպության խորհուրդն իրականացնում է Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են Ժողովի բացառիկ իրավասությանը, կամ Կազմակերպության Կանոնադրության համաձայն կամ Տնօրենների խորհրդի որոշմամբ պատվիրակված են Վարչությանը կամ Վարչության նախագահին:

Խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

- ա) Որոշել Կազմակերպության գործունեության հիմնական ոլորտները,
- բ) Վերահսկել Կազմակերպության ղեկավար մարմինների գործունեությունը,
- գ) Հաստատել Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,
- դ) Գումարել տարեկան և արտահերթ Ժողովներ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,
- ե) Հաստատել Ժողովների օրակարգը,
- զ) Հաստատել Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը, ինչպես նաև լուծել բոլոր այն հարցերը, որոնք կապված են Ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանն Օրենքի դրույթներին համապատասխան,
- է) Օրենքի համաձայն առաջարկություններ ներկայացնել Ժողովների քննարկմանը,
- ը) Օրենքով սահմանված կարգով որոշել գույքի շուկայական արժեքը,
- թ) Կազմակերպության Վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկություններ նախապատրաստել Ժողովի համար,
- ժ) Սահմանել Վարկային կազմակերպության Արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,
- ժա) Միջանկյալ և տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովին ներկայացվելիք առաջարկություններ նախապատրաստել,
- ժբ) Օգտագործել Կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամները,
- ժգ) Հաստատել կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթեր և այլ ներքին կանոնակարգեր,
- ժդ) Հաստատել Կազմակերպության ամենամյա ծախսերի նախահաշիվը և գործարար ծրագիրը,

	<p align="center">ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԼԵԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի</p>	
Թողարկող		Տեղաբաշխող

ժե) Որոշումներ կայացնել Կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր ձեռք բերելու վերաբերյալ,

ժզ) Որոշումներ կայացնել Կազմակերպության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման, այդ թվում՝ հրապարակային տեղաբաշխման մասին

ժե) Նշանակել Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության այլ անդամների, վաղաժամկետ դադարեցնել նրանց իրավասությունները,



ժը) Որոշում կայացնել դուստր ընկերությունների ստեղծման, դրանց կանոնադրական կապիտալում Կազմակերպության մասնակցության չափի մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

ժթ) Որոշում կայացնել Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին և հաստատել դրանց ներքին կանոնակարգերը,

ժի) Որոշում կայացնել այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցելու մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

ի) Որոշում կայացնել հոլդինգային ընկերություններում, ֆինանսական և արդյունաբերական խմբերում, միավորումներում և առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցության մասին,

իա) Հաստատել ցանկացած պայմանագիր, ներառյալ՝ առանց սահմանափակման, Վարկային կազմակերպության գույքի օտարման պայմանագրեր, վարկային պայմանագիր, ծախսերի նախահաշվով չնախատեսված՝ գումարի փոխանցում, չեկ, մուրհակ, վարկ, երաշխիք կամ հավաստագիր, կամ այլ ֆինանսական գործիք կամ գործառնություն, որը գերազանցում է 25,000 ԱՄՆ դոլարի համարժեքը տեղական արժույթով: Ընդ որում, 25,000 ԱՄՆ դոլարի սահմանափակման մեջ չեն մտնում Վարկային կազմակերպության բանկային հաշվից ծախսերի նախահաշվով նախատեսված գործունեության կապակցությամբ կատարվող փոխանցումները, ինչպես նաև Վարկային Կազմակերպության կողմից որպես հիմնական գործունեություն հաճախորդներին տրվող վարկերը և ՀՀ բանկերում դրված ավանդները, ինչպես նաև կարճաժամկետ (վեց ամիսը չգերազանցող) դրամական հոսքերի փոխադարձ ապահովմամբ կատարվող գործարքների (back to back transactions (ներառյալ սվոփ)), ռեպո, դրամական միջոցների գրավով ապահովված վարկեր գործառնությունների, բանկերից ստացվող վարկերի և

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

դեպոզիտների, ֆինանսական կազմակերպություն չհամարվող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձանցից ստացվող փոխառությունների, արտարժույթի առքուվաճառքի և կանխիկացման գործարքները,

իբ) Օրենքով նախատեսված դեպքերում թույլատրելի խոշոր գործարքների կնքումը,

իգ) Սահմանել և ըստ անհրաժեշտության փոփոխել վարկային քաղաքականության ուղղությունը և ներքին վերահսկողության կանոնները, այդ թվում՝ Կազմակերպության աուդիտի և ֆինանսական վերահսկողության ընթացակարգերը,

իդ) Լուծել այլ հարցեր, որոնք Խորհուրդն էական է համարում Վարկային կազմակերպության զարգացման համար, կամ որոնք նախատեսված են Օրենքով և Կազմակերպության Կանոնադրությամբ:

Վերը ներկայացված հարցերը պատկանում են Կազմակերպության Խորհրդի բացառիկ իրավասությանը և չեն կարող պատվիրակվել Վարչությանը՝բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության Վարչությունը

Կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարվում է Կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից՝ Վարչության հետ միասին: Կազմակերպության Գլխավոր տնօրենը և Վարչությունը հաշվետու են Տնօրենների խորհրդին և Բաժնետերերի ժողովին:



Վարչությունը Կազմակերպության կոլեգիալ գործադիր մարմին է: Կազմակերպության կանոնադրության և ՀՀ օրենսդրության համաձայն Գլխավոր տնօրենը, Ֆինանսական տնօրենը, Գործառնական տնօրենը և Գլխավոր հաշվապահն ի պաշտոնե հանդիսանում են Վարչության անդամներ: Վարչության կազմը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Տնօրենների խորհրդի որոշմամբ: Գլխավոր տնօրենը հանդիսանում է Վարչության նախագահը և պատասխանատու է Վարչության գործունեության համար:

Վարչությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) Նախապատրաստում և Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,

բ) Նախապատրաստում և Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության ծախսերի ամենամյա նախահաշիվը և գործարար ծրագիրը,

գ) Իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը և բոլոր գործառնությունները, ներառյալ պայմանագրերի բանակցումը և կնքումը, որը սույն

	<p align="center">ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի</p>	
Թողարկող		Տեղաբաշխող

Կանոնադրությամբ պահանջվող դեպքերում ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կամ Տնօրենների խորհրդի կողմից,

դ) Որոշումներ է կայացնում աշխատակազմի ընտրության, նշանակման և վերապատրաստման մասին, մշակում, հաստատում և անհրաժեշտության դեպքում Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի կառուցվածքը, խթանները և նյութական պարգևների ծրագրերը,

ե) Կազմակերպության ներքին կանոնակարգերը և մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների կանոնակարգերը ներկայացնում է Տնօրենների խորհրդի հաստատմանը,



զ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության ծառայությունների նոր տեսակները և նոր գործառնությունների ու գործունեության իրականացման կարգը՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված շրջանակներում, ի նպաստ Կազմակերպության նպատակների իրագործման,

է) Սահմանում է Կազմակերպության կողմից վարկերի և փոխառությունների տրամադրման կարգն ու պայմանները, վարկային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների սակագները, ինչպես նաև վարկավորման ընթացակարգին վերաբերվող ներքին իրավական ակտերը, բացառությամբ Վարկային կազմակերպության առաքելության, Վարկային բաժնի կառուցվածքի, հաճախորդների ընտրության չափանիշների, վարկային ծառայողների, թիմի ղեկավարների և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների խրախուսական համակարգի, վարկերի վերակառուցման (վարկային գործող պայմանագրի պայմանների փոփոխության) կարգի, վարկային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր բնութագրման, ներքին վերահսկողության հետ հարաբերությունների ընթացակարգերի, որոնք սահմանելու իրավասությունը հանդիսանում է Կազմակերպության Տնօրենների խորհրդի իրավասությունը:

ը) Ամենամյա հաշվետվություններ է պատրաստում Կազմակերպության գործարար գործունեության կարևորագույն ուղղությունների վերաբերյալ և դրանք ներկայացնում Տնօրենների խորհրդին,

թ) Որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեության այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

Վարչությունը կարող է իրականացնել Հայաստանի օրենսդրությամբ և Վարչության կանոնակարգով նախատեսված այլ գործառնություններ:

 FINCA®	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԸԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

Կազմակերպության Գլխավոր տնօրենը



Գլխավոր տնօրենը Վարչության ղեկավարն է: Գլխավոր տնօրենը գործում է Կազմակերպության անունից առանց լիազորագրի, մասնավորապես.

- ա) Տնօրինում է Կազմակերպության գույքը,
- բ) Կազմակերպության անունից Կանոնադրության դրույթների համաձայն կնքում է գործարքներ և պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր,
- գ) Ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական գերատեսչությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում,
- դ) Տալիս է Կազմակերպության անունից գործելու լիազորագրեր,
- ե) Արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ աշխատակիցներին և աշխատակազմի անդամներին և վերահսկում է դրանց կատարումը,
- զ) Աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Վարկային կազմակերպության աշխատակիցներին,
- է) Աշխատակիցների նկատմամբ կիրառում է Վարչության կողմից հաստատված խրախուսման և շահադրդման միջոցներ, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառում Կազմակերպության աշխատակիցների նկատմամբ,
- ը) Ապահովում է, որպեսզի Կազմակերպության ծախսերը չգերազանցեն հաստատված բյուջեն,
- թ) Իրականացնում է Հայաստանի օրենսդրությամբ և Վարչության Կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

23. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը

1. Խորհրդի նախագահ՝ Ջեֆ Ֆլաուերս

Բնակության վայրը	1215 Կրկլենդ Ավենյու, Տակոմա Պարկ, Մասաչուսեթս, 20912, ԱՄՆ
Իրավասությունները	Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
Պարտականությունները	գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող



	դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է ժողովներում:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	ՖԻՆԲԱ Մայքրոֆայնենս Հոլդինգ Քամփնի փոխնախագահ և Եվրասիա տարածաշրջանի ղեկավար

2. Խորհրդի անդամ՝ Դեյն Սթիվեն ՄաքԳվայեր

Բնակության վայրը	126 Ուայթ Էշ Դրայվ Իսթ, Էշվիլ, Հյուսիսային Կարոլինա 28803-5503, ԱՄՆ
Իրավասությունները Պարտականությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	

3. Խորհրդի անդամ՝ Վաժա Մայսուրադե

Բնակության վայր	71 Վաժա Պշավելա պողոտա, Թբիլիսի, Վրաստան
Իրավասությունները Պարտականությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

4. Խորհրդի անդամ՝ Ֆլորիան Դերվիշի


Բնակության վայր	Ռուզա Շիքիրի Իշմի 1, բն. 12, Տիրանա, Ալբանիա
Իրավասությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին,
Պարտականությունները	կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	

5. Խորհրդի անդամ՝ Արարատ Գյուլումյան

Բնակության վայր	Կանադա, Մոնթրեալ H2H 1W9, Բլարք փ. 4074
Իրավասությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին,
Պարտականությունները	կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Աուդիտ մենեջեր, Բեյքեր Թիլլի, Ուկրաինա

1. Վարչության նախագահ - գլխավոր տնօրեն՝ Հրաչյա Թոխմախյան

Բնակության վայրը	ք. Երևան, Դավթաշեն 1 թաղամաս, 10 շ., բն. 25
Իրավասությունները	Իրականացնում է Կազմակերպության ընթացիկ կառավարումը: Պատասխանատու է հաճախորդներին բարձրորակ ֆինանսական ծառայություններով ապահովման, կորպորատիվ, ֆինանսական, ռիսկերի կառավարման լավագույն փորձի կիրառման,
Պարտականությունները	

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԵԱ ՌԻՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

	անձնակազմի զարգացման, Կազմակերպության Կանոնադրության, ընթացակարգերի և ծրագրերի ներդրման և իրականացման համար:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

2. Վարչության անդամ – գլխավոր ֆինանսական տնօրեն՝ Անուշ Պետրոսյան

Բնակության վայրը	ք. Երևան, 28, Յաղոբյան փողոց
Իրավասությունները	Իրականացնում է Կազմակերպության ֆինանսական կառավարումը: Պատասխանատու է Կազմակերպության արդյունավետ ֆինանսական գործունեության,
Պարտականությունները	հաշվապահական հաշվառման, ֆինանսական վերլուծությունների և պլանավորման, համապատասխան ընթացակարգերի և կանոնակարգերի ստեղծման և այլ գործառույթների իրականացման համար:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

3. Վարչության անդամ - գլխավոր հաշվապահ՝ Արտակ Միքայելյան

Բնակության վայրը	Ք. Երևան, Ն.Նորքի 9-րդ գ., 162., բն 3
Իրավասությունները	Ֆինանսական տնօրենի անմիջական ղեկավարության ներքո ապահովում է ֆինանսական և հաշվապահական բնականոն գործընթացները: Պատասխանատու է
Պարտականությունները	հաշվապահական և ֆինանսական ընթացակարգերի և ընդհանուր հաշվապահական համակարգերի ներդրման և կորդինացման, հաշվապահական հաշվառման բոլոր գործառույթների վերահսկման համար:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Ազդագրի ներկայացման պահին Կազմակերպության ակտիվների 10 և ավելի տոկոսը կենտրոնացված չէ որևէ մասնաճյուղում:

Կազմակերպության և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև Ազդագրի ներկայացման պահի դրությամբ շահերի բախում չկա:



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
ՖԻՆԲԱ ՌԻՎԿ ՓԲԸ-ի կողմից
թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսերի





Թողարկող

Տեղաբաշխող

Կազմակերպությունում գործում է Տնօրենների Խորհրդի, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որի նպատակն է կարգավորել և վերահսկել Կազմակերպության ֆինանսական ռիսկերը, ներառյալ իրացվելիության (ֆինանսավորման) ռիսկը, տոկոսադրույքների ռիսկը և արտարժույթի ռիսկը: Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են նաև վարկային ռիսկը, վարկավորման ռիսկը և գործառնական ռիսկն այնքանով, որքանով դրանք ազդում են ֆինանսական ռիսկերի գնահատման և դրան առնչվող գործողությունների վրա: Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը գնահատում է նաև և խորհուրդներ է տրամադրում կապիտալի կառուցվածքին վերաբերող որոշումների շուրջ և ռիսկի կառավարման գործողությունների շրջանակում վերահսկում է կապիտալի բավարարությունը:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերը կազմակերպվում են ամիսը մի անգամ: Կազմակերպության Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմը ներկայացված է ստորև.

Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Իրավասություններն ու պարտականությունները	Հանձնաժողովի գործունեությունից դուրս հանձնաժողովի անդամի ծավալած գործունեությունը
Զեֆ Ֆլաուերս	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	ՖԻՆԲԱ Մայքրոֆայնենս Հոլդինգ Քամփնի փոխնախագահ և Եվրասիա տարածաշրջանի ղեկավար
Անդրե Կոպչենկո	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	ՖԻՆԲԱ Ինթ. Կապիտալ շուկաների խմբի գլխավոր ներդրումային մասնագետ
Գևորգ Տեր-Հովհաննիսյան	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	ՖԻՆԲԱ Ինթ. Գանձապետական ծառայությունների տնօրեն
Հրաչյա	Ակտիվների և	Կազմակերպում է Ակտիվների և	Կազմակերպության

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող



Թոխմայայան	պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նախագահ	պարտավորությունների կառավարման հանձնաժողովի աշխատանքները, գումարում է հանձնաժողովի նիստերն ու նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:	Գլխավոր տնօրեն
Անուշ Պետրոսյան	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	Կազմակերպության Գլխավոր ֆինանսական տնօրեն

Կազմակերպությունում ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքները համապատասխանում են, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Կազմակերպության Կանոնադրության, Դուստր կազմակերպության ընդհանուր քաղաքականության ձեռնարկի կորպորատիվ կառավարման չափանիշներին և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

24. Թողարկողի գլխավոր հաշվապահը

Կազմակերպության գլխավոր հաշվապահն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները և ի պաշտոնե հանդիսանում է Վարչության անդամ:

Կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Կազմակերպության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Կազմակերպության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության գլխավոր հաշվապահն է Արտակ Միքայելյանը:

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

25. Հսկող անձինք

Կազմակերպության հսկող անձ է հանդիսանում՝

✓ «ՖԻՆԲԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ ՅՈՒ. Էյ» ընկերությունը (հասցե՝ Դե Էնտրե 99, 1101 Էյչ-Ի Ամստերդամ, Նիդերլանդներ), որպես Կազմակերպության միակ հիմնադիր:

26. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

Պարտական ֆինանսական տեղեկատվություն

Կազմակերպության 2014-2015 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով և 2016 թվականի երկրորդ եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներառված են Ազդագրում:

Ցանկության դեպքում ներդրողները Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Կազմակերպության գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Թողարկողի պաշտոնական ինտերնետային տնային էջում:

Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2016 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:



Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Կազմակերպությունը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

27. Լրացուցիչ տեղեկատվություն

Կազմակերպության կանոնադրական կապիտալը

ՖԻՆԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ հիմնադրման պահին՝ 2006 թվականի մայիսի 31-ի դրությամբ, Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմել է 155 մլն ՀՀ դրամ, որը բաժանված է եղել

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԵԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

15,500 ոչ փաստաթղթային սովորական բաժնետոմսերի, ընդ որում մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմել է 10,000 ՀՀ դրամ: Գործունեության ընթացքում Կազմակերպության կանոնադրական կապիտալը համալրվել է մի քանի անգամ՝ 2006 թվականի օգոստոսի 28-ին 744,720,000 ՀՀ դրամով, 2009 թվականի օգոստոսի 14-ին 465 մլն ՀՀ դրամով, 2012 թվականի հուլիսի 19-ին 3,126,990,000 ՀՀ դրամով, որից 850 մլն ՀՀ դրամը նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի հաշվին և 2014 թվականի հունիսի 11-ին 414,250,000 ՀՀ դրամով՝ կազմելով 4,905,960,000 ՀՀ դրամ:

Ներկայումս Կազմակերպության փաստացի համալրված կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960,000 (չորս միլիարդ ինը հարյուր հինգ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է ոչ փաստաթղթային տեսքով թողարկված 490,596 (չորս հարյուր իննսուն հազար հինգ հարյուր իննսունվեց) սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Կազմակերպության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Կազմակերպության միակ բաժնետիրոջը՝ «ՖԻՆԵԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» կազմակերպությանը:



Կազմակերպության Կանոնադրության վերաբերյալ տեղեկատվություն

Կազմակերպության հիմնական նպատակը⁴ հանդիսանում է միկրոֆինանսական ծառայությունների ողջ տեսականու տրամադրումը՝ նպատակ հետապնդելով կրճատել աղքատությունը, բարձրացնել զբաղվածության մակարդակը և խթանել ձեռներեցությունն ու Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական համախմբումը, ինչպես նաև ստանալ շահույթ Կազմակերպության գործունեությունից, որը հիմնականում պետք է ուղղվի այդ նպատակների իրագործմանը:

Վերը ներկայացված նպատակներն իրագործելու նպատակով Կազմակերպությունն իրավասու է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված արտոնագրի հիման վրա զբաղվել գործունեության հետևյալ տեսակներով⁵.

- ա) օրենքով թույլատրված սահմաններում՝ ներգրավել փոխառություններ և/կամ կնքել նմանատիպ գործարքներ,
- բ) տրամադրել վարկեր, այդ թվում՝ ձեռնարկատիրական և սպառողական վարկեր, ինչպես

⁴ «ՖԻՆԵԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Կանոնադրություն, կետ 2.1
⁵ «ՖԻՆԵԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Կանոնադրություն, կետ 2.2

	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆ.ԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

նաև իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում (ֆակտորինգ),

գ) տրամադրել երաշխիքներ,

դ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, այդ կապակցությամբ կատարել նման այլ գործառնություններ,

ե) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),

զ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

է) գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ կանխիկ և անկանխիկ ձևերով,

ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքի հետ ստացման գործունեություն, և



ժա) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ, որը կնպաստի Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրագործմանը:

28. Էական պայմանագրերը

Կազմակերպությունում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Կազմակերպության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Կազմակերպության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

29. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը



Ներկայացվող Ազդագրում պարտատոմսերի թողարկման կազմակերպման վերաբերյալ որպես

	<p>ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ՖԻՆԱՆՍԱՆԻ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի</p>	
Թողարկող		Տեղաբաշխող

խորհրդատու հանդես է գալիս՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

30. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.finca.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Կազմակերպության գլխամասային գրասենյակ:

	Թողարկման վերջնական պայմաններ ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 
Թողարկող		Տեղաբաշխող

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«20» դեկտեմբերի 2016 թ.

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ

(թողարկողի անվանումը)

Կորպորատիվ անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր

(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ----- 20 թ.__), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ		
<p>(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)</p>		
1.	Թողարկողը՝	ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ
2.	Երաշխավորողը՝	
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)՝	2017-1
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը՝	
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո	Թողարկողի առաջարկվող պարտատոմսերի մարումների և Թողարկողի կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Թողարկողը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի



Թողարկման վերջնական պայմաններ
 ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
Եթե Ընկերության շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Ընկերությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետզնելու օպցիոնը), ապա Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

Ֆինանսական պարտավորություններ և թողարկված բաժնային գործիքներ
Որպես պարտք կամ սեփական կապիտալ դասակարգումը. Պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ կամ սեփական կապիտալ՝ ելնելով պայմանագրային պարտավորությունների էությունից և ֆինանսական պարտավորության կամ բաժնային գործիքի սահմանումից:

Բաժնային գործիքներ: Բաժնային գործիքը ցանկացած այն պայմանագիրն է, որը վկայում է կազմակերպության ակտիվում ունեցած բաժնեմասնակցության մասը՝ հանած բոլոր պարտավորությունները: Բաժնային գործիքները ճանաչվում են որպես մուտքեր՝ հանած թողարկման ուղղակի ծախսերը:

Ընկերության սեփական բաժնային գործիքների հետզնումը ճանաչվում և ուղղակիորեն նվազեցվում սեփական կապիտալից: Ընկերության սեփական բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ դադարեցման արդյունքում առաջացած օգուտները կամ վնասները չեն ճանաչվում շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետզնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ԶՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Այլ ֆինանսական պարտավորություններ: Այլ ֆինանսական պարտավորությունները, ներառյալ փոխառու միջոցները, ստորադաս պարտավորությունները և այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն գեղջում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարզավճարներ կամ գեղջեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա գուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը: Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:



Ածանցյալ ֆինանսական գործիքներ: Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, այդ թվում՝ արտարժույթի սվոփեր և արտարժույթի փոխանակման պայմանագրեր:

Սվոփն իրենից ներկայացնում է կողմերի միջև որոշակի ժամանակահատվածում վճարումների հոսքերի փոխանակման պայմանագրային համաձայնություն՝ դրանց հիմքում ընկած որոշակի ցուցանիշի նկատմամբ, օրինակ տոկոսադրույքի, արտարժույթի փոխարժեքի կամ կապիտալի ինդեքսի նկատմամբ: Արժույթային սվոփի ընթացքում Ընկերությունը վճարում է որոշակի գումար մեկ արժույթով և ստանում գումար մեկ այլ արժույթով: Արժույթային սվոփերը մեծ մասամբ համախառն են վճարվում:

Նման ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող և դրանց հաշվառումն իրականացվում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Կախված գործիքի շուկայական կամ պայմանագրային արժեքից, ինչպես նաև մի շարք այլ գործոններից, իրական արժեքը որոշվում է շուկայական գնահատումներով կամ գնային մոդելներով: Ածանցյալ ֆինանսական գործիքները համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է և պարտավորություններ, եթե դրանց արժեքը բացասական է: Վերոնշյալ գործիքներով իրականացված գործարքներից շահույթը և վնասը գրանցվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվություններում՝ որպես իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների (պարտավորությունների) գործարքներից առաջացած զուտ օգուտ կամ վնաս: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ներառվում են օգուտում կամ վնասում:

Ընկերությունը որպես վարձակալ: Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցներն և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, վարկային կազմակերպություններից ստացվելիք գումարները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, որոնք կարճ ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Բռնագանձված ակտիվներ: Որոշակի հանգամանքներում, ակտիվները բռնագանձվում են ժամկետանց վարկերի գծով գրավադրված գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում: Բռնագանձված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի ինքնարժեքից նվազագույնով:

Հիմնական միջոցներ: Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է գրոյացնելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

Կապի և հաղորդակցության միջոցներ	— 3 տարի
Գրասենյակային գույք	— 5 տարի
Փոխադրամիջոցներ	— 5 տարի
Այլ հիմնական միջոցներ	— 5 տարի

Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումները մաշեցվում են վարձակալության ժամկետից և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնով, եթե առկա չէ որջամիտ համոզվածություն այն մասին, որ Ընկերությունը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես

ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է չահույթում կամ վնասում:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները, որոնք առանձին են ձեռք բերվել, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում: Ոչ նյութական ակտիվները ապաճանաչվում են դրանք օտարելիս կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուղվիլից: Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Ընկերությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի գնահատվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Ընկերությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության համար առնվազն տարեկան մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է. օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով մինչև հարկումը տոկոսադրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճզրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ քան հաշվեկշռային արժեքը, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորուստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Հարկում: Ծահուֆահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ: Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ ետևյալի, ուժի մեջ մտած հարկի դրույթաչափերը:

Հետաձգված հարկ: Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով՝ կապված հիմնական միջոցների և հաճախորդներին տրված վարկերի հետ: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, կապված վերը նշված ներդրումների հետ, ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը և ժամանակավոր տարբերությունը կմարի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այնքա հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույթների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույթները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ ետևյալի ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Գործունեության հետ կապված հարկեր: Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Ընկերության գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Պահուստներ: Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ: Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, բայց դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Արտարժույթ: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության գործառնական արժույթից տարբեր արժույթով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները (տարրերը) վերահաշվարկվում են այդ օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, վերահաշվարկվում են իրական արժեքի սահմանման օրվա փոխարժեքով: Արտարժույթով հաշվարկված սկզբնական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում:

Դրամական միավորների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են եկամուտներում կամ ծախսերում՝ դրանց առաջացման ժամանակաշրջանում:

Սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման տեսանկյունից, Ընկերության գործունեության ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ օգտագործելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքները: Եկամուտների և ծախսերի հոդվածները փոխարկվում են տվյալ ժամանակահատվածի միջինացված փոխարժեքով, բացառությամբ այն դեպքի երբ տվյալ ժամանակահատվածում առկա է փոխարժեքի էական տատանում. այս դեպքում օգտագործվում են գործարքի ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքները: Առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտի մեջ և կուտակվում սեփական կապիտալում:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջում հետևյալն են՝

	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեք	
	2015թ.	2014թ.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	477.82	415.75	483.75	474.97

Գրավ: Ընկերությունը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց ընդունում է գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Ընկերությանը վերապահվում է պահանջի իրավունք այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Բաժնետիրական կապիտալ: Բաժնետիրական կապիտալի համալրումները ճանաչվում են սկզբնական արժեքով: Թողարկված նոր բաժնեմասերին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումներից, նվազեցվում են սեփական կապիտալից՝ հանած շահութահարկը:

3. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները

Ընկերության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս՝ Ընկերության ղեկավարությանը անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Գնահատման անորոշությունների հիմնական աղբյուրները: Ստորև ներկայացվում են ապագային վերաբերող առանցքային ենթադրությունները և ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատումներից բխող անորոշության այլ հիմնական աղբյուրները, որոնք կրում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների՝ հաջորդող ֆինանսական տարում Էական ճշգրտումների առաջացման զգալի ռիսկ:

Վարկերի և դեբիտորական պարտքի արժեզրկում: Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Ընկերության վարկերի արժեզրկման պահուստները սահմանվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Ընկերությունը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Ընկերության կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Ընկերությունը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս: Անհատական գնահատումները կիրառվում են այն վարկերի և դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված նշանակալի են: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց մնացորդը սեփական կապիտալի 0.5%-ից ավելին է կազմում, համարվում են առանձին վերցված նշանակալի: Այն դեպքում, երբ վարկառուն ունի ֆինանսական դժվարություններ, և առկա են սակավաթիվ պատմական տվյալներ՝ կապված համանման վարկառուների հետ, Ընկերությունը արժեզրկումից կորուստների գումարները գնահատելու համար հիմնվում է ղեկավարության դատողության վրա:

Առանձին վերցված նշանակալի վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերն և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և կետանցվածության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Ընկերությունը ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վնասների նախորդ փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին

համանման արժեզրկման հայտանիշ: Ընկերությունը հիմնվում է ղեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները: Խմբային հիմունքով գանահատման մեթոդաբանության խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստավորումը որոշվում է՝ ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Ընկերությունը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Յայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերը կազմում էին համապատասխանաբար՝ 28,701,290 և 26,500,624 հազար դրամ, իսկ պահուստը՝ համապատասխանաբար 460,744 և 262,892 հազար դրամ: 2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերը ներառում են վերանայված վարկերը համապատասխանաբար 763,757 և 182,198 հազար դրամ գումարով և արժեզրկումից պահուստը՝ համապատասխանաբար 67,084 և 23,244 հազար դրամ գումարով:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ: Հիմնական միջոցները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Ընկերությունը վերանայում է հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում: Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը ղեկավարության դատողության խնդիր է՝ հիմնված նմանատիպ ակտիվների գծով ունեցած նախկին փորձի վրա: Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում ակնկալվող օգտագործումը, գնահատված տեխնիկական կամ բարոյական մաշվածությունը, ֆիզիկական մաշվածքը և ֆիզիկական միջավայրը, որում գործարկվում է ակտիվը: Նշված հանգամանքներում կամ գնահատումներում որևէ փոփոխություն կարող է բերել ապագա մաշվածության դրույթաչափերի փոփոխության:

Հետաձգված հարկային ակտիվների իրացվելիություն: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ հետաձգված հարկային ակտիվների արժեքի գնահատման պահուստի ստեղծման անհրաժեշտություն գոյություն չունի, քանի որ առավել քան հավանական է, որ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ կիրացվի: Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը 2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է համապատասխանաբար 146,266 և 129,890 հազար դրամ:

4. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը

Փոփոխություններ \$ՅՄՍ-ներում, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա: Ընթացիկ տարում ընդունվել/վերանայվել են հետևյալ ստանդարտները և դրանց մեկնաբանությունները: Այս փոփոխությունների կիրառումը Էական ազդեցություն չի ունեցել սույն Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:

- \$ՅՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվկ
- \$ՅՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվկ

\$ՅՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվկ. \$ՅՄՍ-ների տարեկան բարելավումների 2010-2012թթ. թվկը ներառում է մի շարք \$ՅՄՍ-ների փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև:

\$ՅՄՍ 2-ի փոփոխությամբ տեղի է ունենում փոփոխություն «իրավունքի առաջացման պայմաններ» և «շուկայական պայմաններ» հասկացության սահմանման մեջ, ավելացնելով «կատարողական պայմաններ» և «ծառայության պայմաններ» հասկացությունների սահմանումները, որոնք նախկինում ներառված էին «իրավունքի առաջացման պայմանների» սահմանման մեջ:

ՖՐՄՍ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պայմանական վճարումը, որը դասակարգվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, անկախ նրանից, թե արդյոք պայմանական վճարն իրենից ներկայացնում է ֆինանսական գործիք՝ համաձայն ՖՐՄՍ 39-ի կամ ՖՐՄՍ 9-ի, կամ ոչ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն:

ՖՐՄՍ 8-ում տեղի ունեցած փոփոխություններով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը բացահայտի ղեկավարության դատողությունները՝ կիրառելով ամբողջականացման չափանիշը գործառնական սեզմենտների նկատմամբ և պարզաբանվում է, որ հաշվետու սեզմենտի ընդհանուր ակտիվների համեմատագրումը Ընկերության ակտիվների հետ պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ սեզմենտի ակտիվները կանոնավորապես տրամադրվում են գլխավոր գործառնական որոշում կայացնող մարմին:

ՖՐՄՍ 13-ի եզրակացության հիմքերի վերաբերյալ փոփոխությունները պարզաբանում են, որ ՖՐՄՍ 13-ի թողարկումը և դրան հետևած փոփոխությունները ՖՐՄՍ 39-ում և ՖՐՄՍ 9-ում չեն հանգեցնում կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքի՝ առանց տոկոսադրույքի նշման, հաշվապարանքագրային արժեքով և առանց զեղչման չափման հնարավորության կասեցման, եթե զեղչման ազդեցությունը նշանակալի չէ: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում անմիջապես:

ՖՐՄՍ 16-ի և ՖՐՄՍ 38-ի փոփոխությունները վերացնում են առկա անհամապատասխանությունները կուտակված մաշվածության/ամորտիզացիայի հաշվառման գծով այն դեպքում, երբ հիմնական միջոցի միավորը կամ ոչ նյութական ակտիվը վերագնահատվում են: Ըստ վերանայված ստանդարտների պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը համապատասխան եղանակով և որ կուտակված մաշվածությունը/ամորտիզացիան իրենից ներկայացնում է համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության գծով վնասների հաշվարկով դիտարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն:

ՖՐՄՍ 24-ում տեղի ունեցած փոփոխությունները պարզաբանում են, որ առանցքային ղեկավար անձնակազմի ծառայություններ տրամադրող կառավարչական կազմակերպությունը հանդիսանում է հաշվետու ընկերության հետ փոխկապակցված կողմ: Համապատասխանաբար, հաշվետու ընկերությունը պետք է բացահայտի կառավարչական կազմակերպությանը առանցքային ղեկավար անձնակազմի ծառայությունների տրամադրման դիմաց վճարված կամ վճարման ենթակա բոլոր հաշվեգրված գումարները որպես կապակցված կողմերի հետ գործարքներ: Այնուամենայնիվ, նման փոխհատուցման բացահայտում չի պահանջվում:

ՖՐՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականները: 2011-2013 թվականների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՐՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՐՄՍ 3-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ստանդարտը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ ձեռնարկումների ձևավորման հաշվառման նկատմամբ տվյալ համատեղ ձեռնարկման ֆինանսական հաշվետվություններում:

ՖՐՄՍ 13-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խմբի գուտ հիմունքով իրական արժեքի որոշման համար պորտֆելի բացառման շրջանակը ներառում է բոլոր պայմանագրերը, որոնք կարգավորվում են և հաշվառվում են համաձայն ՖՐՄՍ 39-ի կամ ՖՐՄՍ 9-ի, անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պայմանագրերը համապատասխանում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների սահմանմանը՝ համաձայն ՖՐՄՍ 32-ի:

ՖՐՄՍ 40-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՖՐՄՍ 40-ը և ՖՐՄՍ 3-ը փոխադարձաբար բացառելի չեն, և կարող է պահանջվել այդ երկու ստանդարտների միաժամանակ կիրառումը: Համապատասխանաբար, ներդրումային գույք ձեռք բերող ընկերությունը պետք է որոշի, թե արդյոք տվյալ գույքը համապատասխանում է ներդրումային գույքի սահմանմանը՝ համաձայն ՖՐՄՍ 40-ի, և արդյոք գործարքը համապատասխանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սահմանմանը՝ համաձայն ՖՐՄՍ 3-ի:

Ընկերությունը չի իրականացրել թողարկված, սակայն դեռևս չգործող որևէ այլ ստանդարտի, փոփոխության կամ մեկնաբանության վաղ կիրառում:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՅՄՍ-ներ

- | | |
|--|--|
| <ul style="list-style-type: none">• ՖՅՄՍ 9. Ֆինանսական գործիքներ• ՖՅՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ | <p>Գործում է 2018թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p> |
| <ul style="list-style-type: none">• Փոփոխություններ ՅՄՍ 1 ստանդարտում:
<i>Բացահայտման նախաձեռնության ծրագիր</i>• Փոփոխություններ ՅՄՍ 16 և ՅՄՍ 38 ստանդարտում:
<i>Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում</i>• ՖՅՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 ցիկլ | <p>Գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p> |

ՖՅՄՍ 9 - Ֆինանսական գործիքներ

2009թ. նոյեմբերին հրապարակված ՖՅՄՍ 9 նոր պահանջներ է սահմանել ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար: ՖՅՄՍ 9 փոփոխվել է 2010թ. հոկտեմբերին՝ ներառելով ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման պահանջներ, ինչպես նաև՝ 2013թ. նոյեմբերին՝ սահմանելով հեջավորման ընդհանուր հաշվառման նոր պահանջներ: 2014թ. հուլիսին թողարկվեց ՖՅՄՍ 9-ի լրամշակված տարբերակը, որում հիմնականում ներկայացված են ա) ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահանջները, բ) ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման գծով սահմանափակ թվով փոփոխություններ՝ ներկայացնելով «այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող իրական արժեք» հասկացությունը որոշակի պարզ պարտքային գործիքների գծով:

ՖՅՄՍ 9-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- **Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը:** Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները, որոնք գտնվում են ՅՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի շրջանակներում, պետք է հետագայում դասակարգվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, և պայմանագրով նախատեսված դրամական հոսքերն իրենից ներկայացնում են միայն մայր գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում, սկզբնական ճանաչումից հետո սովորաբար չափվում են ամորտիզացված արժեքով: Բիզնես մոդելում պահվող պարտքային գործիքները, որոնց նպատակն իրագործվում է թե պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման և թե ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով, և որոնք ունեն ֆինանսական ակտիվին բնորոշ պայմանագրային պայմաններ, ըստ որոնց առաջանում են դրամական հոսքերի որոշակի ժամկետներ, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա վրա կուտակված տոկոսի մարում՝ որպես կանոն չափվում են իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Բոլոր այլ պարտքային և կապիտալ ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով: Ավելին, ՖՅՄՍ 9-ի համաձայն, կազմակերպությունները կարող են անփոփոխ որոշում կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնելու սեփական կապիտալում (որը չի պահվում առևտրային նպատակներով) ներդրման իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ընդ որում շահույթում կամ վնասում ճանաչելով միայն շահութաբաժինների տեսքով եկամուտը:
- **Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը:** Ինչ վերաբերում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններին, ըստ ՖՅՄՍ 9-ի պահանջվում է, որպեսզի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է տվյալ պարտավորությանը բնորոշ վարկային ռիսկին, ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, եթե պարտավորության վարկային ռիսկի փոփոխությունների ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում չի ստեղծում կամ մեծացնում շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանությունը: Ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին վերագրվող՝ իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն դասակարգվում շահույթում կամ վնասում: Ըստ ՅՄՍ 39-ի,

շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի իրական արժեքի փոփոխության ամբողջ գումարը ներկայացվում է շահույթում կամ վնասում:

- **Արժեզրկում:** Ինչ վերաբերում է ֆինանսական ակտիվների արժեզրկմանը, ՖՅՄՍ 9-ով պահանջվում է «Ակնկալվող վարկային վնասի» մոդելը ֆինանսական ակտիվների արժեզրկման չափման նպատակով՝ ի հակադրություն ՖՅՄՍ 39-ով նախատեսված հաշվեզրկված վարկային վնասի մոդելի: Ակնկալվող վարկային վնասի մոդելով պահանջվում է, որպեսզի ԸՆկերությունը հաշվառի ակնկալվող վարկային վնասները և այդ ակնկալվող վարկային վնասներում տեղի ունեցած փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար վարկային ռիսկում սկզբնական ճանաչման պահից ի վեր տեղի ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ վարկային պատահարի տեղի ունենալը այլևս անհրաժեշտ պայման չէ վարկային վնաս ճանաչելու տեսանկյունից:
- **Յեջավորման հաշվառում:** Ներկայացնում է հեջավորման հաշվառման նոր մոդել, որում պահպանվում են ներկայումս ՖՅՄՍ 39-ով սահմանված հեջային հաշվառման մեխանիզմները: Ըստ ՖՅՄՍ 9-ի ավելի ճկուն մոտեցում է սկսել կիրառվել հեջային հաշվառման ենթակա գործարքների տեսակների մասով, մասնավորապես, ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք կարող են դիտարկվել որպես հեջավորման գործիքներ, և ոչ ֆինանսական միավորների ռիսկի տարրերի տեսակները, որոնք ենթակա են հեջային հաշվառման: Ավելին, արդյունավետության ստուգումը փոխարինվել է «տնտեսական հարաբերությունների» սկզբունքով: Բացի այդ, այլևս չի պահանջվում հեջի արդյունավետության հետընթաց գնահատում: Ներդրվել են նաև ԸՆկերության ռիսկերի կառավարման գործունեության գծով բացահայտման լրացուցիչ պահանջներ:

Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից և թույլ է տրվում դրա վաղ կիրառումը: Կախված ՖՅՄՍ 9-ի կիրառման ընտրված մոտեցումից, անցումային շրջանում տարբեր պահանջների գծով առաջին անգամ կիրառում կարող է տեղի ունենալ մեկ կամ մեկից ավելի ամսաթվերով:

ԸՆկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՅՄՍ 9-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ ԸՆկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ ՖՅՄՍ 9-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

ՖՅՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ: 2014թ. մայիսին հրապարակվել է ՖՅՄՍ 15-ը, որը միասնական համընդհանուր մոդել է սահմանում կազմակերպությունների կողմից հաճախորդների հետ պայմանագրերից զոյացած հասույթի հաշվառման համար: ՖՅՄՍ 15-ը ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի ներկայումս գործող հասույթի ճանաչման ուղեցույցը, այդ թվում՝ ՖՅՄՍ 18 Հասույթ, ՖՅՄՍ 11 Կառուցման պայմանագրեր և դրանց հարակից մեկնաբանությունները:

ՖՅՄՍ 15-ի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ ԸՆկերությունը պետք է ճանաչի հասույթը՝ խոստացված ապրանքների կամ ծառայությունների՝ հաճախորդին փոխանցման փաստը ներկայացնելով այն գումարով, որն ԸՆկերությունը ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների դիմաց: Մասնավորապես, ստանդարտը ներկայացնում է որոշակի հիմունքներով մշակված հինգ քայլից բաղկացած մոդել, որը կիրառելի է հաճախորդների հետ ունեցած բոլոր պայմանագրերի գծով:

Մոդելում ներկայացված են հետևյալ հինգ քայլերը՝

- հաճախորդի հետ ունեցած պայմանագրի սահմանում,
- պայմանագրի կատարման պարտավորությունների սահմանում,
- գործարքի գնի որոշում,
- գործարքի գնի բաշխում պայմանագրի կատարման պարտավորությունների նկատմամբ,
- հասույթի ճանաչում այն ժամանակ (կամ այն բանից հետո), երբ ԸՆկերությունը բավարարում է պայմանագրի կատարման պարտավորությունը:

Ըստ ՖՅՄՍ 15-ի, ԸՆկերությունը ճանաչում է հասույթը այն ժամանակ, կամ այն բանից հետո, երբ պայմանագրի կատարման պարտավորությունը բավարարված է, այսինքն՝ երբ տվյալ կատարման պարտավորությանն առնչվող ապրանքների կամ ծառայությունների վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Ավելի նկարագրական ուղեցույց է ավելացվել նաև այնպիսի թեմաների մասով, ինչպիսիք են՝ հասույթի ճանաչման պահը, փոփոխական հատուցման հաշվառումը, պայմանագրի կատարման և ձեռքբերման հետ կապված ծախսերը և մի շարք այլ հարակից հարցեր: Նաև ներկայացված են նոր բացահայտումներ հասույթի գծով:

Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՅՄՍ 15-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ հասույթի ճանաչման գումարի և ժամկետների վրա: Սակայն նպատակահարմար չէ ՖՅՄՍ 15-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում կատարել առանց դրա ազդեցության վերաբերյալ մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու:

Փոփոխություններ ՋՅՄՍ 1 ստանդարտում. Բացահայտման նախաձեռնության ծրագիր: Այս փոփոխություններով պարզաբանվում են տեղեկատվության բացահայտման սկզբունքները: Ընդլայնվում է էականության սահմանումը: Այն սահմանում է տվյալների ընդհանրացման և տարանջատման պահանջները, պարզաբանում է, որ էականությունը կիրառելի է ֆինանսական հաշվետվությունների բոլոր բաժինների վրա, և անգամ այն դեպքերում, եթե ստանդարտներով պահանջվում է առանձնահատուկ բացահայտումների գծով էականության չափանիշների կիրառում: Ստանդարտը նաև ավելի ընդլայնված ուղեցույցներ է պարունակում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների հերթականության վերաբերյալ:

Փոփոխությունը գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրա ավելի վաղ կիրառումը: Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՋՅՄՍ 16 և ՋՅՄՍ 38 ստանդարտներում. Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում: ՋՅՄՍ 16-ում կատարված փոփոխությունները արգելում են կազմակերպություններին հիմնական միջոցի միավորների նկատմամբ կիրառել հասույթի հիման վրա մաշվածության մեթոդը: ՋՅՄՍ 38 ստանդարտի փոփոխությունները ներկայացնում են վիճարկելի ենթադրություն առ այն, որ հասույթը չի հանդիսանում ակտիվի ամորտիզացիայի համար պատշաճ հիմք: Այս ենթադրությունը կարող է վիճարկվել միայն այն դեպքում, ա) երբ ոչ նյութական ակտիվն արտահայտված է որպես հասույթի չափման միավոր, կամ բ) երբ հնարավոր է ցույց տալ, որ ոչ նյութական ակտիվի գծով հասույթը և դրա գծով տնտեսական օգուտների սպառումը սերտորեն փոխկապակցված են:

Այս փոփոխությունները կիրառվում են առաջընթաց կերպով 2016թ. սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակահատվածների համար: Ներկայումս Ընկերությունը իր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի համար կիրառում է գծային մեթոդը: Ընկերության ղեկավարության կարծիքով գծային մեթոդը առավել պատշաճ է ներկայացնում համապատասխան ակտիվներում պարունակվող տնտեսական օգուտների սպառումը և հետևաբար, չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՋՅՄՍ-ների տարեկան բարելավումներ` 2012-2014 թվականներ: 2012-2014 թվականների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՋՅՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՋՅՄՍ 5-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ակտիվի վերադասակարգումը կամ օտարումը` վաճառքի համար պահվող ակտիվից սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի կամ հակառակը, չպետք է համարվի վաճառքի պլանի կամ սեփականատերերին բաշխման պլանի փոփոխություն և պետք է կիրառվեն օտարման նոր մեթոդի հանդեպ կիրառելի դասակարգման, ներկայացման և չափման պահանջները: Ավելին, այս փոփոխություններով պարզաբանվում է, որ ակտիվները, որոնք այլևս չեն համապատասխանում սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի չափանիշներին, պետք է դիտարկվեն նույն կերպ, ինչ ակտիվները, որոնք դադարում են դասակարգվել որպես վաճառքի համար պահվող: Այս փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

ՋՅՄՍ 7-ի փոփոխությունները լրացուցիչ պարզաբանում են, թե արդյոք սպասարկման պայմանագիրն իրենից ներկայացնում է փոխանցված ակտիվում շարունակական մասնակցություն` փոխանցված ակտիվների գծով պահանջվող բացահայտումների տեսանկյունից: Ի լրումն, ՋՅՄՍ 7-ի փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանելու, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման բացահայտման պահանջները, թեև հստակորեն պարտադիր չէ ներկայացնել բոլոր միջանկյալ ժամանակահատվածների կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում, սակայն կարող է



պահանջվել այս բացահայտումների ներառումը կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ԶՅԱ 34-ի հետ համապատասխանությունն ապահովելու տեսանկյունից: Այս փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց կերպով:

ԶՅԱ 19-ի փոփոխությունները պարզաբանում են, որ բարձր որակի կորպորատիվ պարտատոմսերը, որոնք օգտագործվում են կենսաթոշակային հատուցումների գեղչատոկոսի գնահատման համար, պետք է թողարկվեն հատուցումների վճարման արժույթով: Փոփոխությունները կիրառվում են տվյալ փոփոխությունների առաջին անգամ կիրառմամբ ներկայացված ֆինանսական հաշվետվություններում սկսած ամենավաղ համեմատական ժամանակաշրջանից:

ԶՅԱ 34-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ԶՅԱ 34-ով պահանջվող տեղեկատվությունը, որը ներկայացված է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում, սակայն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից դուրս, պետք է խաչաձև հղման միջոցով ներկայացվի միջանկյալ հաշվետվության և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների այլ մասերի միջև, որը պետք է հասանելի լինի օգտագործողներին միևնույն պայմաններով և միևնույն ժամանակ, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամ	562,965	470,449
Հաշիվներ բանկերում	627,333	2,132,718
Տեղաբաշխված միջոցներ բանկերում՝ մինչև երեք ամիս մարման ժամկետով	-	55,021
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,190,298	2,658,188

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, թղթակցային հաշիվները պահվում են երկու առևտրային ռեզիդենտ բանկում, ընդ որում մնացորդի 88%-ը պահվում է երկու ռեզիդենտ առևտրային բանկում: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Ընկերությունը չունի մեկ ֆինանսական հաստատությունում կենտրոնացած միջոցներ, որոնց մնացորդը կգերազանցեր սեփական կապիտալի 10%-ը (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու ռեզիդենտ առևտրային բանկում՝ 1,730,339 հազար ՀՀ դրամ ընդհանուր մնացորդով):

6. Ծախույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ընկերությունն իրականացրել է տարբեր արժույթային սվոփեր: Նման ածանցյալ ֆինանսական գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով: Ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ այն դեպքում, երբ նրանց իրական արժեքը դրական է, և որպես պարտավորություն այն դեպքում, երբ այն բացասական է:

Ծախույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները/պարտավորությունները ներառում են.

Ակտիվներ	Իրական արժեք		Անվանական գումար		Միջին կշռված պայմանագրային փոխարժեք	
	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.
<i>ՀՀ դրամի առք ԱՄՆ դոլարի վաճառք</i>						
- մինչև 1 ամիս	1,338	105,500	483,125	836,800	483.13	418.40
- 1-ից 2 ամիս	2,806	-	480,460	-	480.46	-
<i>Եվրոի առք ԱՄՆ դոլարի վաճառք</i>						
- մինչև 1 ամիս	-	565	-	28,874	-	1.24
	4,144	106,065	963,585	865,674		

Պարտավորություններ

<i>ՀՀ դրամի առք ԱՄՆ դոլարի վաճառք</i>						
- 1-ից 2 տարի	14,880	-	960,760	-	480.38	-
- 2-ից 3 տարի	77,111	-	957,820	-	478.91	-
	91,991	-	1,918,580	-		

Նշված ֆինանսական գործիքներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ: Վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում է հաշվեկշռում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքը:

7. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ներառում են ՀՀ ֆինանսների նախարարության պարտատոմսեր, որոնք գրավադրված են այլ բանկերի հետ կնքված հետգնման պայմանագրերի դիմաց 948,971 հազար դրամ ընդհանուր գումարով (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ առկա չեն): ՀՀ ֆինանսների նախարարության պարտատոմսերն ունեն 6% անվանական տոկոսադրույք և մինչև 2020թ. ժամկետայնություն:

8. Հաճախորդներին տրված վարկեր

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր	28,701,290	26,500,624
Նվազեցված արժեզրկման կորուստների պահուստը	(460,744)	(262,892)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	28,240,546	26,237,732

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերը ըստ վարկատեսակների՝

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անհատական վարկեր	24,500,238	17,159,442
Գյուղատնտեսական վարկեր*	2,342,242	5,596,052
Խմբային վարկեր*	1,858,810	3,745,130
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	28,701,290	26,500,624
Նվազեցված արժեզրկման կորուստների պահուստը	(460,744)	(262,892)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	28,240,546	26,237,732

* Խմբային և գյուղատնտեսական վարկերը ներառում են խմբային գյուղատնտեսական և անհատական վարկային խմբերի վարկեր, որոնց հիմնական բնութագիրը կայանում է նրանում, որ այս վարկերը տրամադրվում են միայն անհատների խմբերին, որոնք համաձայնում են իրավական պարտավորություն ստանձնել այլ գործընկերների անվճարունակության դեպքում, եթե նման անհրաժեշտություն առաջանա: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ Շնկերությունը նման բնութագրերով վարկեր չի տրամադրում:

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկեր ըստ տնտեսության ոլորտների՝

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վերլուծություն ըստ ճյուղայնության՝		
